

14609

Ն ՄԱՏԵՆԱԴՐԱՆ

№ 19

ԹԵՐՈՒՄ ԿՆՈԶ ԽՈՍՏՈՎԱՆԱԳԸ

Հեղինակութիւն

Տ. ՆԱՏՈԼԻԵՍ. Ա.ԹԱՅԵՍ.ՆԻ

Գրնն է 15 ԿՈՂՖԵԿ

ԿՈՎԿՈՍԻ ՀԱՅՈՅ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Տպ. Ե. Աղանեան, Պօլից. 7

891.95

Ա - 26

Թիվ

Լիզ

ՀՆԿԵՐՈՒԹԵԱՆՍ հրատարակութիւնները

1.	Լ.	Ռւոլէս. Բէն Հուր. հ. 1. թարգմ. անդ. Փ. Վարդանեան	—75
2.	Նոյն,	հ. 11.	—75
3.	Շիրքանզադէ, Արտիստը	—25
4.	Մուրացան. Գէորգ Մարգարետունի, պատմական վէպ	. 1—20	
5.	Ժուլիսկի. Քնած արքայադուստրը, պատկերագ. հէ-	—15	
	քիաթ. փոխադր. Աթ. Խնկոյեան		
6.	Ստ. Տէր-Աւետիքեան. Պատմւածքներ	—50
7.	Նար-Դոս. Մարզ, վէպ.	1—20
8.	Ն. Ռուբակին. Մտորեկրեայ կրակ. պատ.	—50
9.	Զ. Դիկկինս. Դաւիթ Կոպպէրֆիլդ. պատկ. վէպ. մասն	առաջին, անգլ. թարգմ. Փ. Վարդանեան	—75
10.	Նոյն, մասն երկրորդ	—75
11.	Նոյն, մասն երրորդ	—75
12.	Շիրքանզադէ. Երկերի ժողովածու, հատ. IV	1—50
13.	Դ. Դեմիքճեան. բանաստեղծութիւններ	—50
14.	Ռուկէ աղջիկը թարգմ. Լ. Մելիք Աղամեան	—7
15.	Ակ-Բօզատ, թարգմ. Ս. Թողոսոսեան	—15
16.	Ստ. Նաղարեանի երկեր, հ. 1.	1—50

ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

1912

1. Գաբրիէլ Դ'Անունցիօ. Ջիօկօնդա. ողբ. 5 ար. Փրանս. թարգմ. Ա. Յակոբեան:
2. Իլին Ճաւաճաւաձէ. Մուրացկանի պատմածը. վրաց. թարգմ. Տ. Փիրումեան:
3. Ա. Անարոնեան. Աստծու կրակը:
- 4—5. Իւշկիչ. Թագաւոր. ոռու. թարգմ. Յ. Յովհաննիսեան:
6. Յ. Մալմանեան. Յանցանքը:
7. Մէյրի. Ծիլ ու Մաղիկ:
- 8—9. Կոմս Ա. Գ. Տօլստօյ. Խօսնն Ահեղի մահը. ողբ. 5 ար., ոռու. թարգմ. Տ. Յովհաննիսեան:
10. Անտոն Չեխով. Պատմւածքներ. ոռու. թարգմ. Ռ. Խան-Ազատ:
- 11—12. Ա. Ս. Գրիբաեղով, Խելքից պատուհաս, կոմ. Հորս գործ. ոռանաւորով. թարգմ. Լ. Մանուէլեանի.


1913

13. Լորդ Բայրոն. Մանֆրէզ. Անդիերէն բնագրից թարգմանեց Տիրայր վարդ.
14. Գիրի գը-Մոպասան. I ձարտագունդը, II Զարդը. Փրանս. թարգմ. Ռ. Խան-Ազատ:
15. Վ. Վալագեան. Բժիշկը. դրամա 3 գործ.
- 16—17. Կոնտ Համոնն. Պան. Լէյարնանտ Թոմաս Գլանի թղթերից. գերմ. թարգմ. Աւ. Խոտհակեան:
18. Մարգար. վէպիկներ:
19. Թերուս կոնչ խոստովանները. տ. Ն. Աթայեանի: իիրսաբնօհիր ՀԱՄԱՐԸ 15 Կ.

891.99
Ա-26

24 MAY 2005

06 DEC 2010



19

ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ԹԵՐՈՒՄ ԿՆՈԶ
ԽՈՍՏՎԱՆԵԱՆՔԸ

○○○○○○○○

Հեղինակութիւն


Տ. ՆԱՏՈՎԵԱՆ. ԱԹԱՅԵԱՆԻ

1913

ԹԻՖԼԻԶ

Տպարան Ն. Աղամեանի, Պոլից. 7.

1913



JAN 2013

336 02

2005 YAM & S

18609

ԹԵՐՈՒՄ ԿՆԱԶ ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔԸ

Ես մի անշան ու չունեոր ընտանիքի աղջկկ էի: Մեր նիստ ու կացը աւելի քան համեստ էր և մեզ մօտ ամեն բանի մէջ ձնշող չափաւորութիւն էր նկատում: Մեր ընտանիքը մեծ էր. հօրս առեւտրական գործերը անաջող էին գնում. ամեն կողմից ճախորդութիւնների էր հանդիպում: Մայրս կար անելով օգնում էր հօրս. այդ բանը ամենեին դիւր չէր գալիս ինձ և ես ամեն կերպ աշխատում էի ծածուկ պահել իմ ընկերուհիներից՝ մարդուս նշանակութիւնը նսեմացնող այդ արարքը, որպէսզի ընկերուհիներս արհամարհանքով չվերաբերուէին դէպի ինձ: Առանց այն էլ ես ինձ շատ ձնշուած էի զգում ամեն բանում: Ընկերուհիներիս մէջ ամենից համեստ ու անպահոյց հագուածը ես էի, ու դէմքս էլ զրա համեմատ շատ հեղ և պարկեցա արտայայտութիւն ունէր:

Սովորում էի մեր տեղական ծխական դպրոցում: Բոլոր առարկաներից 3-4-էի ստանում: Միայն հայոց լեզուի ուսուցիչն էր ինձ միշտ ու խաչ գնում: Բայց նա վրաս սիրահարուած էր և ատ էր ափսոսում, որ ամուսնացած է ու չի կարող սպազմակութիւն անել:

Տասնուհինգ տարեկան էի, երբ վերջացրի ծխական դպրոցը, Բայց երեսունին մօտ միայն ինձ յաջողուեց ամուսնանալ:

Ես մի առ մի յիշում եմ, թէ ինչպէս անց կացան տարիները դպրոցն աւարտելուց մինչկ ամուսնալու:

Մայրս շարունակ ասում էր հօրս. «Պէտք է աշ-



1564-98

խատենք մեր Անիւտի համար մի արժանաւոր փեսացու գտնել... ինքը գեղեցիկ է, եթէ մենք էլ մի քիչ լաւ շարժուենք, անպատճառ լաւ տեղ կը քցենք»:

«Լաւ շարժուել» խօսքը մօրս բերանում նշանակում էր ինձ զարդարած պահել, դուրս բերել ամեն տեղ աչքի քցել, գնալ-գալու յարաբերութիւն պահանել:

Սկզբում կարծում էի, թէ առաջարկութիւն անողներից որը ինձ դիւր կը գար իր արտաքինով, նա էլ կը համարուէր իմ արժանաւոր փեսացուն:

Բայց յետոյ թէ մայրս և թէ մեր բոլոր ազգականները ինձ հասկացրին, որ փեսացուի արժանաւորութիւնը նրա հարստութեան մէջն է, իսկ հարսնացուինը՝ նրա արտաքին գեղեցկութեան մէջ:

Այսուհետեւ դուք պէտք է տեսնէիք, թէ ինչպէս էի աշխատում, որ աւելի հրապուրիչ երեամ, քան թէ էի իսկապէս... Մանրամասնութիւնների մէջ մտնելու կարիք չկայ. անում էի այն բոլորը, ինչ որ յայտնի է շատերին:

Իինում էին առաջարկութիւն անողներ, բայց «արժանաւորը» գեռ լոյս չէր ընկնում: Բացի փեսացուներից ես ունէի և դատարկապորտ երկրպագուների մի ահագին բանակ՝ բաղկացած «բեալիսաներից», սկիբնարիստներից և «գօրօդիստներից», որոնք խմբերով շրջում էին մեր փողոցներում, լրւսնեակ գիշերները երդում պատուհանիս տակ, որոնք յաճախ իմ պատճառով կուտի էին բանւում, ծեծկուում, միմեանց հագուստ պատօսում, իսկ երբեմն էլ բանը հասնում էր նոյնիսկ ատրճանակի, որով իրար սպառնում էին, ինչպէս իսիստ ոխերիմ ախոյեաններ:

Սիրահարական նամակներ էր, որ ստանում էի, խորհրդաւոր հայեացըներ, սիրալիր ժպիտներ էին, որ շայլում էին ինձ հանդիպելիս:

Ես արդէն հետզհետէ երես էի առնում ստացածս սիրաբորբոք նամակներից, ինձ ուղղած բազմախորհութիւններից... Տանից զուտ-շուտ դուրս գալու սաստիկ ցանկութիւնն էի զգում, որպէսզի յաճախ պատահէի երկը պագուներիս, որոնց հետ ունեցած ծանօթութիւնը ամեն կերպ ծածուկ էի պահում մօրիցու և ամեն անգամ տանից դուրս գալիս խաբում էի թէ գործ ունիմ կամ ընկերունուս մօտ եմ գնում, ասում էի:

Նոյն բանն անում էին նաև ընկերունիներս. իրանց մօր վերաբերեալ եւ մենք միասին գնում էինք զրունելու:

Եթէ մի օր չէր յաջողուում տեսնել մեր «սիմպատիաներին», մեզ շատ վատ վատ էինք զգում. մոլորուածի, քշուածի նման չէինք իմանում մեր անելիքը... Զէի սիրում տանը նստել և մօրս օգնել տան գործերում—եփիլ-թափելուն, կարելուն: Մանաւանդ չէի սիրում ձեռագործ, որից զգուում էի: Զէին սիրում նաև ընկերունիներս: Մայրս սաստիկ զգուն էր ինձնից: նա չէր կամ մենում, որ ես, հետեւ ընկերունիներիս օրինակին, որոնց վերաբերեալ ինքը վատ կարծիք ունէր, փշացնիմ ապագաս և ամուսնանալուս հարցը ենթարկուի հաղար ու մի խոչընդուների:

Միևնոյն վատ կարծիքն ունէին ընկերունիներիս մայրերը իմ վերաբերեալ եւ այդպէս ամեն մի մայր իր աղջկան բարեկիրթ համարելով, զգուշացնում էր միւսների վերաբերեալ՝ երկիւու կրելով, թէ իր աղջկայ անունը կարող է կոտրուել:

«Փող չունիս, բաժինք չունիս, եթէ անունդ էլ վատ համբաւ վայելող աղջկերանց ցուցակն ընկնի, էլ ով կ'ուզէ քեզ», շարունակ կրկնում էր մայրս և սաստիկ զայրանում, որ տանից յաճախ եմ դուրս գալիս

և երկար բացակայում։ Ուստի ամեն անդամ վերադարձիս, ինչպէս ասում են, աչքերը խփում էր ու բերանը բաց անում, աշխարհը սեացնում գլխիս՝ թռնաւորելով մտացածս բաւականութիւնները։ Օր չէր անցնում, որ մայրս ինձ հետ անախորժ տեսարան չսարքէր, մանաւանդ երբ բամբասահէր հօրաքոյրս նրա ականջին էր հասցնում իմ այս ու այն անվայել համարուած վարմունքնիրից մէկն ու մէկը։ Մէկ էլ տեսնում էր գալիս էր բեռնաւորուած նոր համբաւներով։ Ես ատելով ատում էի նրան՝ իր բամբասասիրութեան համար։ Թէկ իրա աղջկերքը ամեն բանում ինձանից գերազանցում էին, բայց որովհետև իրանք հարուստ էին, կարծում էր, թէ նրանք իրաւունք ունին, իսկ ես ոչ։ Մայրս էլ միենոյն կարծիքի էր։ «Նրանց կը սազի, ասում էր, որովհետև հարուստ են»։ Դէպի նրանց ամենքը ևս ներողամիտ էին։

Տատո՞ խստութեան կողմից մօրիցս էլ անց էր։ Սատանան էլ չէր կարող մրցել նրա հետ։ Ինչ էլ անէի, նա պէտք է իմանար ու աղմուկ բարձրացնէր։ Արթուն աչքով հսկում էր ինձ։ «Այս անզգամը, Աստուածանից պատիժ է ուղարկուած մեզ... իրան լաւ չի պահում, տանն է մնալու պէտք է պատաւի ու գլխներիս ցաւ գառնայ», յաճախ կրկնում էր տատու և Աստուած կանչում, որ ինձ համար մի դուռը բաց անէ։

Մի գլուխ ունէի, բայց հազար տէր, տեղից բարձրացողը ինձ նկատողութիւն էր անում, զզուացնելու չափ խրատում...

Ես առնասարակ չէի պատասխանում, բայց երբեմն, երբ համբերութիւնս հատնում էր, ես էլ իմ հերթին կոշտ ու կոպիտ պատասխաններովս վշտացնում էի նրանց։ Միայն մօրաքոյրս էր, որ՝ լեզուն կարծ լինելով՝ ոչ մի նկատողութիւն չէր անում, որովհետեւ

նրա մի աղջիկը փախչելով թռւրք բեալիսաի հետ, մեծ դժուարութեամբ էին տուն բերել, իսկ միւս աղջիկը ապօրէն կենակցում էր մի ուսւ արտիստի հետ։

Ի՞նչ ասել կ'ուզէ, որ հայրս էլ էր ինձնից դժո՞ն և գէպի ինձ ունեցած անբաւականութեան զգացմունքն արտայայտում էր մօրս նախատելով՝ որ նա չգիտէ աղջիկ խրատելու կերպը, որ ինքն ստիպուած է կորագլուխ մանգալ մարդկանց մէջ, որովհետև իրանք արդէն բամբասանքի առարկայ են դարձած քաղաքում, որ քոյրերս վատ օրինակ պէտք է վերցնեն ինձնից, ևայլն, ևայլն։

Իսկ մի անգամ պատուհանիս տակ կանգնած մի աշակերտի ուժգին ապտակ էր տուել՝ իմ երկրպագուներից կարծելով, ու պատասխանը աւելորդով ստացել։ Պատանին հօրս քաշ էր տուել դատարան և իր անմեղութիւնը հաստատել, որի համար հայրս ստիպուած է եղել ներողութիւն ինտիրելու նրանից հանդիսատեսների ներկայութեամբ։

Միենոյն պայմաններումն էին նաև բոլոր ընկերուհիներս։

«Ի՞նչ վայրենութիւն, Աստուած իմ, յուզուած բացականչում էինք մենք՝ իրար պատմելով մեր ցաւերը, արգեօք ինչո՞ւ են ձնշում մեզ և թոյլ չեն տալիս օգտուել թոչող ըոպէներից... Միթէ մեր հասակի գարունը նորից է կրկնուելու կամ նորից հօ աշխարհ չենք գալու...»։ Այդպէս խօսում, զատում էինք և դիմում մեր «սիմպատիաների» խորհրդին, թէ ի՞նչ անենք, ի՞նչպէս ազատուենք մեր ծնողների իշխանութիւնից...»

Նրանք էլ մեղաղրում էին մեզ մեր թուլութեան համար, թէ հարկաւոր չէ ուշադրութիւն դարձնել, չըպէտք է վախինալ, այլ աշխատել համոզել նրանց, որ

մենք՝ նորերս՝ բոլորովին ուրիշ պահանջներ ունինք, որ մենք չենք կարող հների հասկացողութեան համապատասխան կեանք վարել, որ ժամանակը փոխուել է, և այլն, և այլն։ Յետոյ սկսում էին մեզ խրախուսել, օրինակներ բերելով քաղաքակրթուած երկիրների լուսաւորուած կանանց կեանքից, որ նրանց զգացմունքների և ցանկութիւնների վրայ ոչ ոք բռնանալու իրաւունք չունի։ Կանանց նախապատմական կեանքի շըրջանից քաղուածքներ էին բերում, թէ ինչ դրութեան մէջ են եղել նրանք։ Թէ էինը եղել է հօր, եղրօր, ամուսնու շղթայակապ ստրկուհին, որին ծախելու, վոխ տալու, գրաւ գնելու իրաւունք են ունեցել, կարելիս են եղել մեղաւոր ճանաչուածի լեզուն, ականջը, նոյնիսկ սպանել ինձ մնալով անպատիժ և եթէ այդպիսի դրութիւնից հասել է այսօրուան, անկասկած է, որ շատ աւելի հեռու պէտք է զնայ։ Ուրիմն չպէտք է ընկառուել ծնողների գործ դրած բռնութիւններից, չպէտք է ենթարկուել հասարակութեան փտած կարծիքներին, այլ պէտք է շարունակ մըցել բողոքել թէ մէկի և թէ միւսի դէմ, պէտք է պահանջներ անել, վերջի վերջոյ յաղթութիւնը ձերը կը լինի, ողորուած բացականչում էին մեր «սիմպատիաները» և մեզ էլ ոգերում։

Մի կողմից էլ բնութիւնն ինքն էր խրախուսում մեզ իր քաղցր հրապոյրներով… երկինք և երկիր, ծառ և ծաղկի, բոլորը, բոլորը լեզու առած մեզ հետ խօսում էին ժպտալով, բոլորը կարծես մակնիսացած դէպի իրանց էին քաշում մեզ, գգւում ու փայփայում…

Ամեն օր, հազար ու մի սուտ ասելով ու խարելով մեր ծնողներին, հեռանում էինք մեր տներից, որտեղ թէ օդն էր թունաւոր և թէ մթնոլորտը նեխուած մեզ համար… բարձրանում էինք մեր գեղեցիկ լեռների կանաչապատ գագաթները, և կամ գնում ա-

ելի հեռու, մտնում մեր նորատունկ անտառները։ Զբունում էինք՝ խօսելով, ծիծաղելով, կատակներ անկով, յետոյ նստառում մեր սառնորակ, քչքչան աղբիւրների ափերին։ Նայելով մեր հայրենիքի հրաշագեղ բնութեան սպանչելի տեսարաններին, հրճում էինք և մի քանի ժամով մոռանում մեր հոգսերն ու հանգըտանում… Ա՛խ, որքան լաւ էր, որքան քաղցր ու բերկալի էր կեանքը աղատ բնութեան ծոցում մեր «սիմպատիաների» հետ, հեռու քախնդիր մարդկանց մաղձոտ աչքերից, որոնք այնպէս թունաւորում էին մեզ իրանց անմաքուր կասկածներով։ Այդ ժամանակ որքան բարձր էինք գգում մեզ բամբասասէր ամբոխից և որքան նիկալական էինք երկում ինքններս մեր աչքում… «Արդեօք ինչո՞ւ մեր ամեն մի անմեղ վարմունքին յանցաւոր բնաւորութիւն տալով, ստիպում են մեզ գաղտնի վայելել մեր այս անմեղ, ամբիծ զուարձութիւնը», հարց էինք տալիս մեր «սիմպատիաներին», շատ անգամ էլ արտասում։ Յաճախ, երբ նեղն էինք ընկնում ներսի նախատինքներից ու դրսի հալածանքներից, մտադրում էինք փախչել Ամերիկա կամ Շվեյցարիա և ապրել այդ պատ երկներում, հեռու մեր աղատութիւնը կաշկանդող մարդկանցից։ Անձրևային օրերն անտառնելի էին լինում բառիս բուն մտքով, երբ չէր կարելի ոչ տանից գուրս գալ և ոչ էլ հիւր ընդունել։ Պարապութիւնից սաստիկ ձանձրանում էի, հետաքրքիր պարապմունք էլ չէի գանում. ճարս կարած գիրք էի կարգում։ Բայց չէի սիրում, երբ կարգալուց սիրոյ վառ տեսարանները յանկարծ ընդհատում էին վերացական անհետաքրքիր զատողութիւններով և հերոսուհին հերոսի հետ միասին անհետանում էին աչքերիս առաջից։ Սակայն ես նրանց խկոյն գտնում էի, բայց ոչ թէ կարդալով, այլ թեր-

թելով, ինձ շատ էին դիւր դալիս վէպերի մէջ՝ սիրուց տանջուած, քնքացած, վշտերով տարուած, քշուած, մտքով վեր սլացած, աչքերով երազուն, դէմքով ամօթխած, փիղիքապէս թոյլ ձեացող, ամբողջապէս հնաթարկուած տղամարդու կամքին և իւրաքանչիւր քայլափում նրանց օգնութեան դիմող, նրբազգաց, նըրբանկատ հերոսուհիները և ինքս էլ ամեն կերպ ձիգ էի թափումնրանց նմանուել: Զմռուանամ տսելու, որ գրքերում պատահած գեղեցիկ փրազները, վեհ մտքեր բովանդակող դարձուածները միշտ վերցնում էի՝ այսպէս ասած, վարձով և նրանցով՝ իրքն էժան գնով ձեռք բերած գոհարներ, մարդամէջ դուրս գալիս խելքս էի զարդարում, աշխատելով տեղին յարմար գործ ածել, որպէսզի արտաքին զարդարանքներիս ու գեղեցկութեանս հետ ներդաշնակուէին նաև ներքին գեղեցկութիւններս:

Երիտասարդների մէջ այն կարծիքն էր տիրում, որ ես ոչ միայն գեղեցիկ եմ, այլև բարձր զաղափարներով տոգորուած ու խիստ ազգասէր մի աղջիկ: «Նա մի հատիկ է կանանց մէջ», ասում էին իմ երկրպագուները և ինձ անուանում «կանանց պարծանք», «գեղեցկութեան թագուհի», «հիւրերի զարդ», և այլն, և այլն, այսպէս և սրանց նման խօսքերով էին փաղաքում ինքնասիրութիւնս, երբ դիմում էին ինձ տոմսակներ ծախելու և կամ այս ու այն նպատակով տրուած ներկայացումների, երեկոյթների համար բուֆէտում նըստելու:

Ցիշում եմ, թէ ինչպիսի հպարտութեամբ էի նըստում տոմսակների կամ ծաղիկների սեղանի մօտ, շըրջապատուած երիտասարդներով, իսկ կանայք ինչպէս էին թունաւորում ինքնարաւականութիւնս իրանց տհաճ վերաբերմունքով և ծաղրելով ազգասիրութիւնս: Սա-

կայն ճիշտը խոստովանած՝ ես թէ ազգասիրութեան և թէ ուրիշ նոյնանման բաների մասին ոչ զաղափար ունէի և ոչ էլ պարզ հասկացողութիւն: Բացի ինձնից ես ոչ ոքի չէի սիրում. իմ բաւականութիւնների սահմանից գուրս ուրիշ ոչ մի բանի մասին չէի մտածում: Բայց թէ ինչո՞ւ էի ճգնում լինել ամեն տեղ և նետուել ամեն բանի մէջ, այդ նրա համար, որ նախ՝ յետ չմնայի ոչ ոքից, յետոյ ուրախ ժամանակ անցկացնէի: Իսկ նպատակս ինձ համար արժանաւոր փեսացու գտնելն էր: Շատ անգամ ընկերուհիներս ինձ յիմար էին անուանում պարզ լինելու համար և նախատում, թէ ինչո՞ւ եմ խոստովանում այն, ինչ որ մենք մեզանից էլ պէտք է թագնենք:

Աշնանը, երբ մեր երկինքը հագնում էր իր մոխրագոյն մուշտակը և սկսում էր մաղել բարակ անձրևու վերջանում էին դրախ զբոսանքները, սիրտներս սկըսում էր ճնշուել, մաշող թախիծը պաշարում էր մեզ, որից աղատուելու յուսով՝ ես ու ընկերուհիներս մեր ծանօթ երիտասարդների հետ ժողովներ էինք սարքում ընթերցանութեամբ պարապելու:

Մեզանից իւրաքանչիւրը մի առանձին նախանձով էր յիշում մեր այն ընկերուհիներին, որոնց յաջողուել էր զիմնազիան վերջացնել. դրանք կարողանում էին ուսանողների հետ վարժ ուսուելուն խօսել և խիստ բարձրից էին նայում մեզ վրայ: «Ինչո՞ւ մենք էլ չսպորենք, ինչո՞ւ մենք էլ չզարգանանք», մտածում էինք, յետոյ եռանդով ծրագիր կազմում, թէ ինչ ուղղութեան գրքեր պէտք է կարդանք և ինչպէս պէտք է շարունակենք սկսելիք գործը:

Մի երկու շաբաթ հաւաքւում էինք միայն խորհրդակցելու, զբքեր ընտրելու:

Երիտասարդներից մէկն առաջարկում էր քաղա-

քառասութիւն անցնել, ասելով՝ զարգացողութեան միակ ճանապարհը այդ գիտութիւնն է, որովհետև դրանում շատ բազմակողմանի հարցեր են շօշափում, որոնց իմանալը ամեն մի անհատի համար անհրաժեշտ է: Մի ուրիշը կարծիք էր յայտնում, թէ առանց հասարակական գիտութիւններ իմանալու չի կարելի ոչինչ անել. երրորդն էլ պնդում էր, թէ անհրաժեշտ է ուսումնասիրել Մարքսի Կապիտալը: Յետոյ մեզ խորհուրդ էին տալիս ընտրուած գրքերը կարդալ առանձին-առանձին, մեր տներում, որպէսզի կարողանայինք կարծիք յայտնել ժողովում, խօսել մեր կարդացածների մասին:

Բայց պէտք է ասած, որ երկար ու բարակ խօսել չէինք սիրում մեր կարգացած, ճիշտն ասած՝ լոկ թերթած գրքերի բովանդակութեան մասին: Երբ կարծիք էին հարցնում, բոլորս միաբերան պատասխանում էինք. «Հրաշալի գիրք էր—պրостո պրելես! Այս վերջի խօսքը միշտ ոռւսերէն էինք արտասանում:

Գրքերի բովանդակութեան վերաբերեալ մեր կարծիքները յայտնելուց յետոյ անցնում էինք բէֆէրատների հարցին: Մեզանից ամեն մէկը իր զարգացողութեան և ճաշակի համապատասխան թեմա էր ընտրում. մէկը ուզեղի, միւսը ջղերի և ուրիշ սրանց նման բաների համար խօսելու. երրորդը վերցնում էր ապահարզանի հարցը, չորրորդը կանանց իրաւունքների հարցը: Իսկ ես միշտ վերցնում էի սիրոյ հարցը, քանի որ այդ հարցը շատ լաւ էի ուսումնասիրել և խօսելիս ինձ փաստեր, տեղեկութիւններ չէին պակասում, որովհետև իմ ու ընկերունիներիս խօսակցութեան առարկան միշտ սէրն էր, որ մենք մանրազնին անալիգի էինք ենթարկում... Բայց մինչև բէֆէրատների լոյս աշխարհ գալը մենք սիրահարւում էինք և ամեն ինչ կորցնում էր իր նշանակութիւնը մեր աչքում:

մեր լեզուի փոխարէն սկսում էին խօսել մեր աչքերը... Եւ մենք զոյգերի բաժանուած՝ աշխատում էինք այնպէս տեսնուել, այնպէս խօսել, որ կողմնակի մարդիկ ոչինչ չնկատէին:

Աստուած ոչ անէր, որ մեր քաղաքացիք մէկի վերաբերեալ կասկածէին, այնուհետև կըսկէին աչքաբաց հսկել նրանց իրանց ցանկապատի, ատխտակապատի արանքներից, այլևս ոչինչ չէր ազատուի նրանց աչքերից ու ականջներից... Դեռ փոխ էլ պանէին տասնեակ աչքեր ու ականջներ և խորհրդացոյցով կըդիտէին նրա ամեն մի վարմունքը: Մինչև անգամ մի առանձին խորհուրդ էին տեսնում հազարու, փոշտալու մէջ և ենթադրութիւններ անում ու այդ ենթադրութիւնները հազորդում հեռուներին, իրեկ փաստեր... Մի խօսքով թողնում էին իրանց բան ու գործը, իրարով ընկնում և նրան դարձնում իրանց զբաղմունքի գլխաւոր առարկան:

Զնայած մեր գործ գրած մեծ զգուշութիւններին, գարձեալ չէինք կարողանում մեր անմեղ ֆլիքտները—սիրախաղը ծածուկ պահել հասարակութիւնից, որովհետև մեր այն ընկերունիները՝ որոնց չէր յաջողուում սիրուած լինել, նախանձից տարուած, երևան էին հանում մեր գաղանիքը և ամբողջ քաղաքը մեր դէմ հանում... Սատանային էր միայն յայտնի, թէ մեր սիրահարութիւնների մասին լոսոնների երևակայութիւնը մինչև ուր էր հասնում... Մինչդեռ մեր բոլոր յանցանքը միմիայն քանի մի համբոյրներն ու մի քանի սիրահարկան նամակներն էին լինում:

Յետոյ սառչելով՝ թողնում հեռանում էինք ու սկսում որոնել մի ուրիշին, երրորդին, չորրորդին...

Որովհետև մեր սիրահարների վրայ չէինք նայում իբրև փեսացուների, քանի որ նրանց տարիքը 18-ից,

19-ից չէին անցնում: Այլ հէնց այնպէս ժամանակ էինք անցկացնում, մինչև արժանաւոր փեսացուների լոյսընկնելը:

Ամառը՝ երբ ուսանողները վերադառնում էին իրանց գեղեցիկ համազգեստներով, մենք իսպառ մոռանում էինք մեր ձմեռուայ սիմպատիաներին... Նրանք իրանց փայլը այնպէս էին կորցնում ուսանողների առաջ, ինչպէս լուսինը արեգակի առաջ:

Մեզանից իւրաքանչիւրը գործ էր դնում իր բոլոր հմայքը՝ ուսանողների ուշադրութիւնը արժանանալու... Իսկ այդ երջանկութեան համելու միակ ճանապարհը այն ժամանակ ազգասիրութիւնն էր: Իրա համար էլ ամառուայ ամիսներում աւելի էինք ազգասէր գառնում, եռանդով լցուած՝ վագում դէս ու դէն, անձնազոհութեամբ նետում գործի ասպարէզ և թէյ պատրաստում ազգային խնջոյքներում, երեկոյթներում, որը մեծ պատիւ էինք համարում մեղ համար և անմահացած զգում մեզ... Ո՞ւր ուզարկէին, որ չվազէինք, ինչ յանձնարարէին, որ չկատարէինք... Պատրաստ էինք ամեն տեսակ ծառայութիւններ մատուցել նրանց, միայն թէ հաճոյք պատճառէինք և տեղ բռնէինք նրանց սրտերում:

Յիշում եմ, թէ ինչպէս մի անգամ բոլոր ազգասէր օրիորդներս մի ժողովում, երկու ժամուայ մէջ յանկարծ գարձանք կօսմոզովիտներ մի պարոնի աղզեցութեան տակ, որ երկար բացակայ լինելուց յետոյ նոր էր վերադարձել իր ծննդավայրը՝ տողորուած վեհ զաղափարներով, դինուած դիտութեան պաշարով և որի համբաւը՝ մինչև իրա գալը արդէն արտասահմանի հեռաւոր խորքերից հասել էր մեր քաղաք և կայծակի արագութեամբ տարածուել մեր կրթուած կանանց շրջանում: Այս հանրահոչակ պարոնի հետ յաճախ տես-

նուելու ցանկութիւնը մի չտեսնուած իրարանցում էր քցել մեր մէջ և մի անօրինակ կենդանութիւն առաջ բերել: Մեզանից յետ չէին մնացել նաև տիկնայք, ուրոնք իրար էին խառնուել, շուտ-շուտ ժողովներ էին սարքում, հրաւիրում այդ պարոնին և ամեն բանի համար նրա խորհրդին դիմում, բոլորը միանդամից էին զրաւուել նրանով:

Մըցումը խիստ կատաղի էր, տեսարանները շատ հետաքրքիր, որի մանրամասնութիւնների մէջ մտնելը գուըսէ իմ խոստովանանքի ծրագրից... Միայն այսքանը կ'ասեմ, որ իմ ջերմեռանդ երկարգուներից մէկը այդ պարոնին մի ասպետական ապտակ տուաւ նրա ինձ ուղղած մի անհամեստ հաճոյախօսութեան համար և նա քաղաքից հեռացաւ անպատուած: Մեր ուսանողներից շատերը արտասահմանի մայրաքաղաքների աղմկալից կեանքից վերադառնալով մեր խուլ գաւառական քաղաքը՝ երկու շաբաթ չանցած՝ սաստիկ ձանձրանում էին, ուստի շուրջը տիրող անտանելի լուռեթիւնը խզելու և փոքր ի շատէ կենդանութիւն առաջ բերելու նպատակով, բացի խնջոյքներից նաև ժողովներ էին սարքում և հրաւիրում քաղաքում առաջնակարգ համարուած կանանց: Մեզանից նա՛ ով ընկնում էր հրաւիրուողների ցուցակը և յաճախում այդ ժողովները, յաղթութիւնը տարած աքաղաղի հպարտութեամբ էր վերաբերում յաղթահարուած ընկերունիներին, որոնք հետուից նայում էին մաղձոսուած աչքերով և վրէժինովութեան ծրագիրներ կազմում:

Ուսանողների հետ ծանօթ լինելը, նրանցից բարե ստանալը շոյում էր մեր փառասիրութիւնը... Իսկ նրանց հետ մօտ լինելը և միասին զրօննելը ամեն մի հասարակ մահկանացուի նախանձից վեր մի անմատչելի երջանկութիւն էր, որին մեզանից շատ քչերն

էին արժանանում, որոնցից մէկն էլ ես էի, իբրև աչքի ընկնող մի գեղեցկուհի: Բայց և այնպէս նրանց վերաբերմունքը գէպի ինձ այն չէր, ինչ որ ինձ էր ցանկալի: Ուստեղէն չիմանալս յարաբերութեան գեղեցկութիւնը տգեղացնում էր: Ցիշում եմ մի գէպը, որ երբէք չեմ մոռանալու:

Մի ուսանող՝ որին սաստիկ սիրում էի, չէր սիրում հայերէն ոչ խօսել և ոչ լսել: Բացատրուելու ժամանակ ասացի: «Я тебѣ такъ многого люблио, такъ многого люблио, что»... Էլ չկարողացայ շարունակել, լսեցի թաշկինակս մօտեցնելով աչքերիս և ձեացնելով, թէ արցունքներս խանդարեցին:

Նա փոխանակ զգացմունքիս պատասխանելու, սխալս ուղղեց և սկսեց ծիծաղել: Ես ու ընկերունեիներս երբ տեսնում էինք ուսանողներին զիմնապիստկաների հետ թեակցած սարը բարձրանալիս կամ քաղցր քչիթչալով սարից իջնելիս, խորը վիշտ: Էլինք զգում և անիծում մեր ծնողներին, թէ ինչո՞ւ մենք էլ զիմնապիստկաներ չենք եղել, որ նրանց պէս ազատ զգայինք մեղ և արհամարհէինք բոլորին...

Օ՛, մեր կեանքը շատ էր աղմկալի և լի «հոգեկան ներքին յուղմունքներով»...

Սակայն չմոռանամ պատմելու, թէ մենք ինչ էինք անում ուսանողների կազմած ժողովներում:

Դասախոսութիւնների ժամանակ բոլորիս գէմքի վրայ երեան էր գալիս ձանձրոյթքի նշաններ: հազիւ հազ էինք զսպում մեր յօրանցինու ցանկութիւնը: Բայց երբ դասախոսութիւնները վերջանում էին և սկսում վիճաբանութիւնները, մենք՝ օրիորդներս մեզ շատ ազատ էինք զգում, փափում էինք իբար ականջի, սրախօսութիւններ... անում երիտասարդների, հասցէին՝ իւրաքանչիւրին՝ իթ: արժանաւորութիւն համա-

պատասխան անուն կպցնում կամ նրանց մէջից մեղ համար «սիմպատիաներ» ընտրում: իսկ երբ ծիծաղներս գալիս էր, կամ թաշկինակն էինք բերաններիս սեղմում կամ թագնում իբար ետև:

Բայց մի անգամ մի դէպք պատահեց ինձ, որ երբէք չպիտի մոռանամ: Այն ժամանակ ես գեռ զարգացած չէի: վիճաբանող ուսանողներից մէկը յանկարծ գիմելով ինձ, հարցրեց: «Դուք ի՞նչպէս էք կարծում, օրիորդ»: — «Ես էլ այդպէս եմ կարծում», պատասխանցի ես, առանց հասկանալու, թէ ինչի մասին է հարցնում, չնայած, որ ես այդ միջոցին ըստ երեսյթին ուշադրութեամբ նայում էի երկու վիճաբանողներին. «Չատ լաւ, եթէ զուք համաձայն էք պարոնի հետ, բերէք ձեր փաստերը, հետաքրքրական է լսել ձեզ, ասացինձ գիմողի հակառակորդը: — «Ի հարկէ, ի՞նչ կասկած», նորից պատասխանեցի ես: — «Ի՞նչպէս թէ», զարմացած արտասանեցին երկուսով միասին: «Այս, այս, շատ պարզ է», նորից պատասխանեցի ես, չիմանալով թէ ի՞նչպէս զուրս գամ մի այդպիսի անյարմար դրութիւնից:

«Ի՞նչն է պարզ, օրիորդ, մենք ձեզ չենք հասկանում», հարցրին երկուսով միասին:

«Ի հարկէ, ի հարկէ, ինդրեմ, ինդրեմ, ամեն մարդ իր կարծիքի աղատ տէրն է, ոչ ոք իբաւունք չունի ուրիշի կարծիքի վրայ բռնանալու, ճառեցի ես:

Տիրեց մի անախորժ լուսութիւն: Ես մի հեգնոտ ժայիտ նկատեցի նրանց գէմքին: Մէկը մինչեւ անգամ ուսերը շարժեց տարակումանքով: Յետոյ սկսեցին իրանց մէջ շարունակել վիճաբանութիւնը: Ժողովը վերջացաւ, ես տուն վերադարձայ ծանր տպաւորութեան տակ: Նրանք մասնաւում ժամանակակիցների ինձ վրայ:



Աերջանում էր ամառուայ սեղօնը, ուսանողները գնում էին իրանց գործին, տանելով իրանց հետ և մեր սրտերը: Դարձեալ մնում էինք մոլորուած, քշուած, չի-մանալով մեր անելիքը... Խորին լուութիւն էր տիրում մեր շուրջը... Այդին և միւս զբոսավայրերը կորցնում էին մեր աշքում իրանց նշանակութիւնը և չոր ու ցա-մաք անապատի տպաւորութիւն անում մեզ վրայ: Մեզ շատ վատ էինք զգում և չէինք իմանում ինչպէս փո-փոխենք մեր պրօզայիկ կեանքի տաղտկալի միատե-սակութիւնը...

Մի դէպք էլ եմ յիշում, որի նմանը քիչ է պա-տահում մարդու կեանքում:

Մի ամառ ես և ընկերունիս սիրահարուեցինք մի ուսանողի վրայ: Պարոնը գնում էր Պետերուրու: Մենք էլ վճռեցինք հետևել նրան և տարածում էինք, թէ գը-նում ենք մեր ուսումը շարունակելու:

Երիտասարդի սէրը այնպէս էր մեզ վառել բորբոքել, որ մոռացել էինք ամեն ինչ: Տանը մեր ծնողներին հանգիստ չէինք տալիս՝ թոյլաւութեան իրաւունք խընդ-րելով, դուրսը հասարակութեան՝ բարեգործական պատ-րուակի տակ փող հաւաքելով... Բոլորին հաւատա-ցնում էինք, թէ ուսման տենչը այնպիսի թափով է զար-թել մեր մէջ, որ եթէ չյաջողուի մեր գնալը, ինքնա-սպանութիւն պիտի գործենք: Այդ նապատակով նոյն իսկ դիմեցինք Թիֆլիզ մեր մի «գիմնազիստկա» ընկերու-հուն, նա էլ սկսեց աշակերտունիների շրջանում դրամ հաւաքել ու մեզ ուղարկել: Բայց մինչև հարկաւոր գումարը ձեռք բերելը, վճռեցինք մեր սիրտը բանալ պարոնին և առանց երկար ու բարակ մտածելու եր-կուսով միասին մի նամակ գրեցինք նրան, որի մէջ մանրամանաբար նկարագրեցինք մեր հոգեկան տան-ջանքները, թէ երկուսն էլ առանց իրան չենք կարող

ապրել... Բայց մինչև փողի պակասը լրանալը այն անպիտանից մի խայտառակ մերժում ստացանք. նա փոխանակ մեզ գրելու ասելիքը, իրա ընկերներից մէ-կին է նամակ գրում և սաստիկ պախարակում մեր վարմունքը և յայտնում, որ ինքը ոչ մի ցանկութիւն չունի միջից կիսուելու մեզ համար, և իրեւ թէ այդ բաւական չէր, մեր նամակն էլ ուղարկել էր նրան. վերջինս էլ մեր գաղտնին յայտնելով ամբողջ քաղա-քին, մեզ ծամոն դարձրեց բոլորի բերանում:

Այդ դէպքը շատ վատ էր ազգել մեզ վրայ, և մենք մեզ սփոփելու համար ասում էինք՝ զարգացած մարդիկ այդպիսի լուրերին ոչ մի նշանակութիւն չեն տալիս, իսկ տգէաների կարծիքը մեզ հարկաւոր չէ: Բայց և այնպէս մենք ոչ մի կերպ չէինք կարողանում մոռա-նալ այն ապերախտ պարոնի անսիրտ վարմունքը, շա-րունակ աշխատում էինք վրէժինդիր լինել՝ ընթացք տալով կանացի այն բոլոր յատկութիւններին, որոնք գործ են դրում այդպիսի դէպքերում:

Իսկ մեր երկրպագուներից մէկը մեզ խօսք տուաւ խայտառակել այն ապերախտին իրանց աշակերտա-կան թերթում և մի չաղ ապատակ էլ հասցնել նրա «նա-խալ» լիրք ընկերին՝ մեր նամակը սրան-նրան ցոյց տալու համար, և այսպիսով վերականգնել մեր պատիւը:

Այս անախորժ դէպքից մի կարճ ժամանակ ան-ցած, մի օր ընկերունիս ուրախ-ուրախ յայտնեց ինձ, որ ինքը արդէն սիրուած է մի հրաշալի պարոնից, որ անհամեմատ բարձր է կանգնած այն յիմարից, որը այնպէս տմարդի կերպով խայտառակեց մեզ՝ գարձնե-լով չարակաների ծաղրի առարկան:

Յանկարծակի գլուխս սաստիկ տաքացաւ, աչքե-

ըըս վասուեցին ներքին տհաճութեան զգացմունքից, երբ իմացայ, թէ ընկերունուս խօսքը վերաբերում է Սեղբակ անունով մի պարոնի:

Թէև ես արդէն սիրում էի մի ուրիշ պարոնից, որ հանգիստը կորցրած, քունը կտրած գիշեր-ցերեկ ինձ էր հետևում իմ անրաժան ստուերը դարձած և ամուսնանալու լուրջ առաջարկութիւն էր անում և ես էլ նրան պահում էի «հա» ու «չի» մէջ սև օրուայ համար, բայց Սեղբակի հետ ծանօթանալուց յետոյնա իր արժէքը այնպէս կորցրեց իմ աչքում, ինչպէս կեղծ աղամանդը իսկականի առաջ և ես արդէն սկսել էի սրան աչքերովս սառնութիւն, իսկ Սեղբակին տրամադրութիւն ցոյց տալ: Բայց բանը ձգձգում էր, որովհետև սիրահարս լինելով շատ անինքնասէր, ոչ մի կերպ չէր ցանկանում ձեռք վերցնել ինձնից և սպառնում էր ինձ ինքնասպանութեամբ: Որքան եղաւ թըշւառի յուսահատութեան չափը, երբ գարնան դէմ, Զատկուայ տօնին, իբրև սիւրպըից յայտնեցի վճռականապէս, թէ այլև չեմ սիրում իրան: Նա սկսեց այնպէս հեկեկալ, որի ձայնը կարծես դեռ մինչեւ հիմա էլ լսում եմ:

Միւս օրը նա ինձ յետ ուղարկեց իմ գրած նամակները, լուսանկարս, ընծայ տուած մազերս, թաշկինակս մի կտոր թղթի հետ, որի վրայ գրել էր հետեւելը.

«Յարգելի օրիորդ, աշխատեցէք ինձ հետ կատարած խայտառակ խաղը չկըկնել մի ուրիշի հետ... Զգնյշ վարուեցէք ոչ միայն ուրիշի, այլև ձեր զգացմունքների հետ, որովհետև մարդու թէ կնոջ պատիւը ամեն բանից բարձր պէտք է լինի»:

Երբ այդ նամակը կարդացի ընկերունիներիս մօտ, շատ ծիծաղեցինք: Զարմանալի խորհուրդ. ինչու չպէտք

է կրկնել: Երեխ նա կարծում էր, թէ ինքը առաջինն էր, ուստի և կամենում էր վերջինը մնալ:

Եւ զրա չետ հաշիւս դեռ նոր էի վերջացրել և ուզում էի Սեղբակի հետ սկսել, երբ ընկերունիս ինձ յայտնեց իր գաղտնիքը:

—Ուրեմն արդէն բացատրուել էր, —հարցրի ես, բորբոքուած խանդս քօղարկելով բանի ժպտի տակ: Այրում էի, որ չէր կարողացել շուտ վերջացնել սիրահարիս հիա, որի պատճառով Սեղբակը ինձ թողել և ընկերունում էր դարձել:

—Այն, այն, արդէն ամեն բան վերջացած է: Նա ինձ վրայ սիրահարուած է մինչև մազերի ծայրը: Ուղղակի տանջում է: մեղքս է գալիս: Դու չես իմանում, թէ ինչպէս է աղերսում ինձ իր հրաշալի աչքերով:

—Իսկ գուցէ նա...»

—Ո՛չ, ո՛չ, առանց գուցէ-ի, նա ինձ սիրում է և ուրիշ ոչինչ. ես զրա մէջ աւելի քան համոզուած եմ: Ինքը՝ իբրև անփորձ երիտասարդ, չի վստահանում առաջինը բացուել, կասկածելով, թէ կարող է մերժում ստանալ: Արած ակնարկներս էլ չի հասկանում: Ե՛լ բաւական է. վճռել եմ համաձայնութիւնս յայտնել, ամուսնանք վերջանայ, գնայ, և ահա մի շատ ազդու նամակ եմ գրել: լսիր՝ կարզամ. վրան «գուխի» եմ սրսկել, և տես ինչ գեղեցիկ թղթի վրայ եմ գրել... լսիր.

«Իմ պաշտելի, անձկալի, սիրելի Սեղբակ!!! «Ախ!!! չեմ իմանում ինչպէս սկսեմ... ախ!!!. վերջապէս... Մինչև երբ պէտք է գու տանջուես... ես զիտեմ, հասկացել եմ, որ գու ինձ սի... Ուրեմն ինչու ուշացնենք, ինչու տանջուենք... Աւելի լաւ է բացուենք, որ մեր ժամանակը ուրախ անցնի... Կեանքը կարճ է, մէկ էլ

նորից չենք գալու այս աշխարհ... Ախ! չեմ իմանում,
թէ ինչ ասեմ!... Ախ! գիշերը չեմ քնում... Ամբողջ օրը
լաց եմ լինում... Փտած մարդիկ էլ այնքան խօսում
են ինձ վրայ, թէ զու ինձ հետ զբօնում ես, որ չեմ
իմանում, թէ ի՞նչպէս աղատուեմ նրանց ձեռքից...
Շնոր պատասխանիր, ախ... ամուր համբուրում եմ քեզ:
Քո պաշտելի Վարդուշ»:

Ընկերուհիս նոր էր վերջացրել նամակը, երբ մեզ
մօտեցան մեր ծանօթներից երկու պարոն: Այդ բողէին
մենք սարի զագաթին էինք:

Ընկերուհիս նրանց պատմեց իր գաղտնիքը և
կամեցաւ նրանց կալծիքն իմանաւ, թէ արդեօք տար-
օրինակ չէ, երբ առաջինը ինքն է կամենում բացա-
տրուել պարոնի հետ:

Նրանք էլ երկուսով միասին գտան, որ ոչ մի ա-
մօթ չկայ, որ Ամերիկայում օրիորդները իրանք են
առաջարկութիւն անում պարոններին, էլ ինչու գուրք
էլ նոյնը չանչք, ինչով էք պակաս նրանցից, ինչու
պէտք է ճնշուէք, որ զգացմունքի զսպելը կեղծիք է, որ
ժամանակ է կեղծ ամօթխածութիւնը դէն շպրտելու,
և այլն... Այդպէս խօսակցութիւնը հեռու տանե-
լով քցեցին նրանց արտասահմանի խորքերը. թէ այն-
տեղ փեսացուն ոչ մի իրաւունք չունի իր հարսնա-
ցուից հաշիւ պահանջելու նրա անցեալի վերաբերեաւ,
թէ առհասարակ աբօլիւտ—բացարձակ բարոյականու-
թիւն չկայ, որ այդ պայմանական հասկացողութիւն
է, որ ամեն մէկը զբա մասին իր առանձին կարծիքն
ու արշինն ունի, և այլն, և այլն: Առհասարակ շատ ա-
ղատամիտ էին մէր բոլոր «սիմպատիաները»—երկրպա-
գուները և միւս բոլոր հեռումօտիկ ծանօթ, ընկեր-
երիտասարդ պարոնները:

Նոյն օրը երիկնապահին ընկերուհիս նամակը ան-

ձամբ տուաւ Սեղրակին զբօնելու ժամանակը ևս էլ
մի խորհրդաւոր հայեացք բցեցի նրա վրայ և անցայ:
Արդէն վճռել էի նրան խել ընկերունուցս, որը ար-
տաքինով շատ ստոր էր ինձնից, ուստի համոզուած
էի, որ Սեղրակը ինձ պէտք է գերադասէք, մանաւանդ
որ նա ևս նոյն խորհրդաւորութեամբ պատասխանեց
հայեացքիս և ձեռքս էլ սկզբեց մի առանձին տեսակ:

Միւս օրը ընկերունու գտայ իր սենեակում քիթ
ու աչքերը արցունքներից ուսած, կարմրած: Սեղրակը
նրան պատասխանել էր մի քանի նախադասութիւնից
բաղկացած մի նամակով.

«Յարգելի օրիորդ!

Դուք սաստիկ մոլորուած էք: Ես ձեզ բոլորովին
չեմ սիրում, հետեապէս խօսք անգամ չի կարող լինել
տանջանքի համար, ժամանակս էլ ամենելին տիսուր չի
անցնում, կարող էք հանգիստ լինել:—Զեր խոնարհ
ծառայ»: Նամակը զրել էր մատիտով, աշակերտական
տետրակից պոկած մի կեղտոտ թերթի վրայ, որի ե-
տեսում երկրաչափական խնդիրներ էին լուծուած և լուզ-
բզորած:

Այս սառն և կտրուկ մերժումից ընկերուհիս ու-
ղեղի ցնցումն էր ստացել. խեղճ աղջիկը երկար ժա-
մանակ չէր կարողանում մարզը զագանից, իսկ հովա-
նոցը դաշոյնից զանազանի: Մի անգամ այգում զրու-
նելու ժամանակ յարձակուեց իր ծանօթ մի տիկնոջ
վրայ, նրան վագրի տեղ ընդունելով, իսկ հովանոցը
իրը կաշոյն պտըտացըրեց նրա զլիին: Յետոյ էլ մա-
նեա ստացաւ, որ իր ամուսինը մեռել է. ուսորի սե-
զզեստով էր ման գալիս, որի պատճառով նրան «այրի-
օրիորդ» էին անուանում:

Բաւական տանջուելուց յետոյ վերջապէս խելքը
զլուխը եկաւ, որից յետոյ սկսեց նոր փեսացու որոնել:

Այդ ինքնատիպ պարոնի հետ ունեցած իմ բաշարութիւնն էլ շատ տիտուր վախճան ունեցաւ: Նա իր աչքերի անհամեստ խաղով միայն նպատակ էր ունենում ճանապարհից դուրս բերել իրան պատահած կնոջը՝ առանց հասակի խարսութեան, թէև պատահածը իրանից Յ անգամ փոքր լինէր կամ Յ անգամ միեւ:

Ես և ընկերուհիս նրանից մեր վրէժը համելու նպատակով ամեն տեղ նրան անուանում էինք բարոյական ժամանակա, աշխատում էինք ամեն կերպ հաւատացնել՝ որ նրա համար սրբութիւն չկայ, որ նա պատրաստ է նոյնիսկ... ևայլն, ևայլն... Ընկերուհու քթից ծուխ ու մուխ էր բարձրանում: Նրանից ստացած արհամարհական մերժումը նա ոչ մի կերպ չէր կարողանում մոռանալ, մէկ մտածում էր կուսանոց մտնել մէկ սպառնում էր ինքնասպանութիւն գործելով՝ նրա խղճի վրայ ծանրանալ...

Սկզբներում երբ գեռ շատ էինք անփորձ, սաստիկ վախենում էինք հասարակական կարծիքից և աշխատում էինք ամեն ինչ ծածուկ անել, որպէսզի ասէկօսէների առարկայ չգառնայինք: Բայց յետոյ հետամուտ եղանք և տեսանք, որ ընդհանուրի խօսակցութեանն են ենթարկուած անխտիր կերպով թէ համեստները և թէ անհամեստները, և որ հասարակութիւնը աւելի շատ անողոք է միայն զէպի չունեսուների աղջկերքն ու կանայքը: Մենք էլ հասարակութեան այդ տեսակ աշառու և անարդար վարմունքներից գառնացած՝ էլ ուշ չէինք դարձնում նրա կարծիքի վրայ և անում էինք՝ ինչ որ «քէֆներս» թելադրում էր մեզ:

Թատրոնների նրբանցքները, հիւրասինեակը, ակումբը իր բոլոր սինեակներով, դարձրել էինք մեզ համար սիրային քչիչոցի ընդարձակ վայրեր: Հասարակական այգին մերն էր ու մերը: Ճեմելիքները, նստա-

րանները, բոլոր հեռու-մօտիկ անկիւնները մեր դոյզերն էին լինում բռնած...

Մեզ վրայ բարձրացած մասնակի շշուկը այժմ փոխուել էր ընդհանուր ազմուկի: Ամբողջ քաղաքը մի բերան դարձած աղջկերանց վրայ էր խօսում: Լաւ ու վատ բոլորը իրար էին խառնել:

Բայց մենք ամենքին նշանակութիւն չէինք տալիս մարդկանց կարծիքներին, ինչպէս խորհուրդ էին տալիս մեզ մեր ազատամիտ երկրպագուները — մեր «սիմպատիաները» և առհասարակ մեր բոլոր՝ թէ ընկեր և թէ հեռու-մօտիկ ծանօթ պարօնները, որոնք շարունակ խրախուսում էին և ոգեսրում մեզ, թէ կինք աղամարդուց ոչ մի բանով չպէտք է յետ մնայ բարիս ընդպարձակ մտքով և պատրաստ էին մարակի տակը տալ և դուրս անել այգուց մեզ վրայ խեթ նայողներին:

Բայց տարաբաղդաբար երկար չտեսց մեր թովը-ռուն հասակի ուրախ շրջանը: Մրդէն մօտենում էին օրիորդական այն պատկառելի տարիքը, երբ նրանց «պառաւ-աղջկի» մականունն են կացնում: Մեր չերմեռանդ երկրպագուները, մեր անբաժան ստուերները դարձած, «սիմպատիաները», որ պատրաստ էին մեզ հետ ոչ միայն փախչել Ամերիկա, այլև այնտեղից էլ անցնել մեր երկրագնդի հարեւան միւս մոլորակները, որոնք պատրաստ էին «անմահական աղբիւրից մաղով ջուր բերելու» մեզ համար ու էլի շատ բաներ անել, այժմ սկսել էին կամաց-կամաց գաւաճանել մեզ... նրանք մեզնից խոյս տալով, արդէն ընկերէին նոր լոյս ընկած աւելի երիտասարդ, աւելի ազատամիտ աղջկերանց ետքից և մեզանից շատերին դարձրել իրանց սրախօսութեան առարկան, ոմանց անուանում էին «ցամաքային»

գիցուհիներ», ոմանց «սպաւոր յաւերժահարսունք»... Բոլորս միասին «ծակ-աղատամիտ» ածականն էինք կրում: Իսկ ժողովուրդը մեզ անուանում էր «կապը կտրածներ»:

Հայրս ուղղակի յուսահատութեան մէջ էր. նա տըրտնչալով էր իր օրերը մթնացնում, որովհետև մայրս շարունակ նախատում էր նրան, թէ ինչու ինքն էլ ուրիշների նման չի կարողանում գլուխը քարերին գալով փող աշխատել և կարգին տուն ու տեղ պահել: Նա շարունակ փող էր պահանջում հագուստեղենի, ճնունդ, աճուանիակոչութիւն կատարելու և լոտո ու թղթախաղ սարքելու ծախսերի համար, պակասն էլ ինքն էր լրացնում իր կարից ձեռք բերած փողով, որպէսզի կարողանայ զնալ-գալու յարաբերութիւն մէջ լինել աչքի ընկնող ընտանիքների հետ, ինձ հետ միասին մարդամէջ երեալ և մի արժանաւոր փեսացու գանել ինձ համար:

Ես որքան մեծանում էի ու «զարգանում», այնքան էլ մեծանում էին պահանջներս, առաջ էին գալիս այնպիսի ստիպողական ծախսեր, որոնցից ոչ մի կերպ խուսափելու հնարաւորութիւն չէր լինում:

Քոյրերս էլ արդէն եկել հասել էին հետեիցս, որոնք իմ պատճառով զրկուած էին ամեն մի բաւականութիւնից: Երբ նրանք տրտունջ էին բարձրացնում, մայրս նրանց միթարում էր հետեւալ խօսքերով. «Մի քիչ էլ զիմացէք, Անիւտան կ'ամուսնանայ, հերթը կը հասնի ձեզ»:

Իսկ իմ ամուսնանալը դարձել էր մի անմատչելի երջանկութիւն ու անցել անիրազործելի ցնորքների շարքը:

Թէև իբրև գեղեցիկ աղջիկ ունեցել էի ձեռք խընդրողներ, բայց ինչ, նոյնիսկ ամաչում եմ ասել թէ ինչ դասակարգի մարդիկ էին. կմախքացած արհեստա-

ւորներ, անշարժութիւնից փքուած խանութպաններ, ամսական 28 ո. 50 կ. ոռճիկ ստացող, զիսարկները գեղնած, վերարկուները մաշուած, կօշիկները ծակը իրանք կիսաքաղց ծխական դպրոցի վարժապետներ՝ մէկը միւսից անյայտ, մէկը միւսից աննշան և չքաւոր... Սակայն դրանք էլ վերջերումը սառելհետացել էին՝ շատ աղատամիտ համարելով ինձ:

Բայց միւնոյնն էր: Դրանց նմանները ինձ համար եղած-չեղած, մէկ հաշիւ էր: Ուսանողները ճաշակս այնպէս էին դարգացրել ու նրբացրել իրանց շնորհաշուք շարժութիւններով, որ ես անկարող էի դրանց նման տափակներին հաւանելի:

Իմ ցնորքի զիսաւոր առարկան միշտ եղել էին ուսանողները և նրանց նման պարոնները, որոնց վրայ նայում էի, իբրև ապագայի բուրժուացների վրայ և սաստիկ ցանկանում, նոյն չափով էլ աշխատում նրանց մէջից փեսացու գանել: Միւնոյն ցնորքներով էին տարուած նաև բոլոր ընկերունիներս: Մենք միմեանցից չէինք թագյնում:

Բայց զարմանալի ապերախս մարդիկ էին մեզ շրջապատող թէ ուսանողները և թէ նրանց շրջանում գտնուող փեսացու համարուած պարոնները: Գաթա, քայլցրաւենիներ ուտելու և թէյ ու սուրճ խմելու համար զիսապատառ վազում էին մեր տները, ժամերով նստում, ձեւանում մտերիմ, բայց չէին իսկ կասկածում, թէ մեր ծնողների հետ ինչպիսի անախորժութիւններ էինք ունենում այդ սեղանները պատրաստելու համար, յոյս ունենալով ու մեր մայրերին էլ յուսագրելով, թէ այս օր չէ վաղը. սրանցից մէկն ու մէկը մեր ձեռքը խնդրելու է, քանի որ ամենքը ևս սիրահարուած են մեղ վրայ, և թէ որին մենք ինքներս հաւանենք, նրան էլ կ'ընտրենք: Բայց հէնց որ

բանը համուռմ էր բացատրութեան և ամուսնանալու խնդիրը մէջ էր բերւում, նրանցից ամեն մէկը այդ բանի համար իրանց արժանապատութիւնից ստոր էր համարում մեղ և հաղար ու մի պատրուակներ բերելով փախուստ տալիս: Դժբաղպարար մենք շատ ուշ հասկացանք, թէ երիտասարդները երբէք չեն ամուսնուռմ իրանց փնտուղ օրիորդների հետ, այլ միայն նրանց հետ, որոնք խուսափում են իրանցից:

Ի միջի այլոց պատմեմ մի միջանկեալ դէպք իմ կեանքից, որ լի է զանազան արկածալի դիպուածներով:

Ազգասէր պարոններից մէկը իր կը պահու ճառերով խելքից հանել էր ինձ և դարձել իմ կուռքը: Աղերսական հայեացքներ քցելուց, ակնարկներ անելուց արդէն յոգնել էի: Կարծես ապուշ լինէր այս հարցում, ոչինչ չէր նկատում կամ համականում, չնայած, որ շատ մօտ էինք և միշտ միասին էինք լինում: Հաճոյախօսութիւններ՝ ռըքան ուղում էք, բայց ձեռքս ինսդրելու վերաբերեալ և ոչ մի ակնարկ... Ես նրան շատ արժանաւոր փեսացու էի համարում ինձ համար, ուստի վճռեցի նամակով յայտնել նրան սէրս և վերցնելով մի րօմանից մի շատ գեղեցիկ նամակ, առանց չակերտների բառ առ բառ արտագրեցի, իբրև իմ յօրինած, դարդարեցի նկարներով և ուղարկեցի:

Եւ հպարտութեամբ մտածում էի, թէ որքան պիտի զարմանայ իմ սահուն զըչի գեղեցկութեամբ:

Միւս օրը պատասխան ստացայ. սակայն ի՞նչ տեսայ, Աստուած իմ, միենոյն րօմանից նոյն նամակի պատասխանը գրքից թերթը պոկել և ինձ էր ուղարկել: Իսկ դրանցից յետոյ պատահելիս՝ այնպէս էր փարւում հետս, որ կարծես ոչ նամակ էր ստացել և ոչ էլ պատասխանել:

Մեր շրջանում փեսացուների մեծ կրիզիս էր: Ճգնաժամ էր վրայ հասել, բոլորն էլ յուսահատուել, վը-հատուել ու լքուած դրութեան մէջ էին ընկել, ուզում էին թքել ամուսնութեան վրայ և մտնել բժշկական կուլսերը:

Միայն թէ չէի իմանում, թէ «էտիմօլօգիան» ինչպէս սովորէի, «րից յետոյ միւս առարկաները շատ հեշտ էր թւում:

Բայց ինքս դեռ չէի յուսահատուել. հայելին ինձ շարունակ խրախուսում էր: Տարիները, կարծես, փայփայելով, գուրգուրելով էին գլխովս սահում, անցնում դէմքիս վրայ առանց հետք թողնելու, բայց և այնպէս սպասողական գրութիւնը անտանելի էր:

Ողջ օրը չէի հեռանում հայելուց, բոլոր ժամանակը իմ «տուալէտով» էի զբաղուած: Երևակայել չէք կարող, թէ ինչ ծիծաղելի միջոցների էի գիմում՝ ինձ աւելի գեղեցիկ, աւելի գիւթիչ և նրապուրող գարձնելու համար: Մանրամանութիւնների մէջ մտնելը իմ մէջ ինքնասիրութեան բողոք է առաջ բերում, միայն մէկն ասեմ, որ կուրծքս մէծացնում էի բամբակով, իսկ հասակիս կարճութիւնը եռակի կրունկներով լրացնում: Միշտ հազնում էի փոքրիկ կօշիկներ, թէն տանչում էի նրանց առաջ բերած կոշտուկներից, բայց մի կերպ դիմանում էի, որովհետև փոքրիկ ոտեր ունենալն էլ մի առանձին գեղեցկութիւն էր: Ես նկատում էի, թէ ինչպէս երիտասարդները մի առանձին հաճութեամբ էին զիտում ոտքերս:

Երբ ամեն անգամ զարդարուելուց յետոյ հայելու առաջ կանգնած նայում էի և տեսնում, թէ արտաքինս մէջ ոչ մի պակասութիւն չկայ, մոռանում էի գըլուխս, հոգիս հրձւում էր ներքին բաւականութիւնից... Եւ ինչէր, ինչէր էի մտածում ու երևակայում... Միր-

տըս թրպոտում էր անհամբերութիւնից, թէ երբ պէտք է ամուսնանամ...

Եւ այսպէս շարունակ զբաղուած էի լինում իմ արտաքինով, որովհետեւ տղամարդիկ այդ էին պահանջում և այդ բանը մայրս դեռ փոքր հասակիցս էր ներշնչել ինձ, թէ հարսնացուի արժանաւորութիւնը նրա արտաքին գեղեցկութեան մէջն է, իսկ փեսացուինը նրա հարստութեան մէջ:

Եւ իսկապէս, որքան մօտ էի ծանօթանում ինձ շրջապատող կեանքի պայմաններին, այնքան տեղի էի համոզւում այդ բանում:

Ամեն տեղ ու ամեն բանի մէջ տեսնում էի հարուստ գեղեցկուիներ կենդրոն կազմած, իրանց շուրջը հաւաքած ամենքին, մանաւանդ կրթուած ու նշանաւոր երիտասարդներին, որոնց ուղղակի խաղացնում էին իրանց մատերի վրայ... Հասարակական ամեն մի գործի գլուխ նրանք էին լինում անցած, ամեն բանի մէջ առաջնակարդ դերը նրանց էր պատկանում: Ամենքը ևս նրանց խորհրդին ու օգնութեանն էին դիմում:

Ես նորից պէտք է ասեմ, որ շատ գեղեցիկ էի. բայց ինչ արած, որ հարուստ չէի: Թէև հագնուում էի վերջին տարագով, միշտ աշխատում էի հարուստների շրջանում լինել, ոչ մի բանից յետ չէի մնում, լինում էի ամեն տեղ, խառնուում էի ազգային գործերին և արժանանում երիտասարդների ուշալքութեան: Բայց և այնպէս այդ այն չէր, ինչ որ վայելում էին հարուստ գեղեցկուիները... երիտասարդները մի առանձին թափով էին ձգտում դէպի այդպիսիները, իսկ մօտենում ինձ միայն այն ժամանակ, երբ նրանք բացակայ էին լինում և ասպարէզը ինձ ու ինձ նմաններին էր լինում մնացած, — այնպէս որ՝ լիտակատար երջանիկ լինելու

համար, ինձ պակասում էր հարստութիւն..., և միայն հարստութիւն: Բոլորովին պարզ էր, որ գեղեցկութիւնը՝ միացած հարստութեան հետ՝ կնոջ համար կազմում է մի այնպիսի հրաշալի դիմակ, որի տակ նա կարող է թագնել թէ գլխի դատարկութիւնը և թէ բնաւորութեան բոլոր այլանդակութիւնները... Թէ ես և թէ մայրս թէև մեր շքեղ հագուստներով երևում էինք ամեն տեղ, բայց չէինք կարողանում քօղարկել մեր չուներութիւնը, որովհետեւ ամենքն էլ գիտէին, որ մենք չքաւոր ենք, ուստի մի տեսակ արհամարհանքով էին վերաբերում դէպի մեզ: Մանաւանդ հարուստ դասակարգի մեծաշղուք կանայք ուղղակի ինձ հալածում էին իրանց աչքերի արհամարհուտ հայեացքներով: Ես չէի կարողանում տանել նրանց այդ թունալի ակնարկներն ու կծու հեգնանքը իմ այս կամ այն վարմունքիս համար: Որևէ մի տեղ երեալս, որևէ մի բանի խառնուելս, երիտասարդների հետ զբօննելս կամ ազատ խօսել-ծիծաղելս մհծ յանդգնութիւն էր թւում նրանց աչքին և այդ էլ ինձ զգալ էին տալիս իւրաքանչիւր քայլափոխում մի առանձին տեսակ վերաբերմունքով: Ես նրանց ատում էի իրովոր սրտէ, նախանձը տանջում էր ինձ... Սակայն այդ բոլոր տհաճութեան զգացմունքները մէջն թագնելով, սէր և յարգանք էի ցոյց տալիս նրանց տեսնելիս, պատահելիս ժպտալով էի մօտենում, սիրալիր բարեւում և ամեն կերպ աշխատում էի հաճոյանալ և տեղ բռնել նրանց շրջանում, որպէսզի կողմնակի գիտողները ինձ ևս նրանց շրջանի մարդ կարծելով, յարգանքով վերաբերուէին դէպի ինձ ու համարձակուէին վրաս շատ խօսել: Հարուստ դասակարգի կանանց վրայ հասարակութիւնը չէր համարձակում խօսել. տեսածնաերը չիմանալուն էր գնում: Ես նորից սկսել էի վախենալ «ասէ-կոսէ»-ներից, քանի որ գլուխս ազատ

քամիներով լցնող երիտասարդ պարոնները այժմ հակառակ կողմից էին ինձ դիմաւորում՝ թէ ինձ և թէ ինձ նմաններին անուանելով «անցուկ շրջանի հիւանդուտ տիպեր», «ազգայիններ», «անսօրմալներ» և այլն... Եթէ որ կարողանայիք երեակայել, թէ որպիսի անհանդուրժելի վիրաւորանքներ էի կրում ինձ շրջապատողներից, մանաւանդ ինքնահաւան հարուստ կանանցից...

Յիշում եմ, երբ այգում կամ ակումբի դահլիճում մօտենում էի մէկին կամ միւսին և քծնուելով բարեւում, ինչպէս էին ժախտը սաւցնում շրթերիս վրայ իրանց սառն պատասխանով։ Եւ երբ տեսած չիմանալու դնելով, ուզում էի քօղարկել և այդպէս անց ու դարձ անել, նրանք այդ բոպէին կամ գրպաննին էին մտաքերում, կամ իրանց մագերը հարթելու, սանրելուց անկութիւն և կամ քիթները սրբելու պահանջ զգում, որպէսզի իրանց թել ազատէին իմ թերց... Ես միշտ թունաւորուած էի վերաբառնում տուն և մտքումս անիծում ծնողներիս՝ այն բոլոր հոգեկան տանջանքների համար, որոնց ես ենթարկուում էի մարդկանց կողմից՝ չքաւոր և անյայտ ընտանիքի աղջիկ լինելուս պատճառով։ Ես միշտ յանդիմանում էի ծնողներիս, թէ ինչ չել ինձ գիմնազիա չեն ուղարկել, որ ես էլ իրաւունք ունենայի ինձ ազատ զգալու, սիրաս ուզածի չափ, չկառկածելով իսկ՝ թէ հասարակութիւնը կարող է վրաս ճօշշալ... Օ՛, ես շատ էի դժգոհ իմ ծնողներից, որ առանց նեռուն մտածելու, ինձ աշխարհ են բերել... Յաճախ՝ երբ զայրոյթս համեռում էր կատաղութեան, ձեռքս ընկած առարկաները զարկում էի գետնին և կոտրատում։ Այդպէս էի անում մանաւանդ այն դէպքերում, երբ «մօղնի» հագուստի պակասութիւն էի զգում և դրա

պատճառով՝ զրկուում դրսի զուարձութիւններից։ Ես արդէն ջղային էի գարձել։

Այդպիսի գէպքերում բաւական էր մի չնչին առիթ, որ ես ահսարաններ սարքէի մեր ընտանիքում։ Բոլոր ընկերուհիներս էլ ջղային էին, անախորժ տեսարաններ յաճախ էին տեղի ունենում նաև նըանց տըներում։

Տասս ու մայրս ոչ մի գաղափար չունէին թէ ինչ բան է ջղայնութիւնը՝ հիստերիան։

Երբ ես բարկութիւնից կըակ կտրած՝ սկսում էի ճուճուալ, աղաղակել, անկանոն պտոյտներ անելով վագվզել սենեակի մէջ, հանդիպած առարկաները դէս ու դէն շլրատուել, աջ ու ձախ վիրաւորել մէկին, միւսին, բուռնցքներս սեղանին, ոտերս գետնին զարկել... մի խօսքով՝ անելայն, ինչ որ կը թելադրէին ինձ իմ «քընքշացած» ջղերը, տասս այդ ամենը «լաշառութիւն» էր անուանում և ամեն անգամ զարմացած բացականչում։

«Փառք Քեղ, Աստուած, գեռ էլլի ինչե՛ր ենք տեսնելու»։ Իսկ մայրս՝ քթի տակ անիծելով իրա բաղզը, անիծում էր նաև բոլոր զրքերի հեղինակներին՝ կարդացածս զրքերին վերագրելով իմ մէջ եղած իրան անդիւր բաները։

Առաջուայ պէս նըանք այլևս չէին կարողանում ազատ յարձակուել վրաս և նախատել անվերջ։ Այժմ մեր գերերը փոխուել էին. յարձակուելու, նախատելու հերթը իմն էր, որովհետեւ արդէն բաւականաչափ «զարգացած» աղջիկ էի։ Երբ ձայն էին հանում ու ես բղաւում էի, իսկոյն լուում էին։ Իրանց արած մի նկատողութեանը տասը պատասխան էի տալիս։

Տասս շարունակ աղօթում էր և ինքրում Աստուծուն։

«Աստուած ջան, Դու մի դուռը բաց անես այս

իրական աշխարհը իր տիսուր և անշուրք տեսարաններով։ Հիմասթափուած նայում էի շուրջս. մի փոքր, մութ սենեակ՝ խունացած պատառով, յատակն անսերկ, առաստաղը ցածր, պատուհանները փոքր... Ամեն ինչ հին, անձոնի, անճաշակ... Ես էլ թուլացած ընկած իմ անպաճոյմ անկողնու վրայ, քերականութեան դասագիրքս ընկած յատակին, դասերս չսովորած, իսկ մայրս էլ միւս սենեակում տրտնջալիս, տատս սգալիս, ինչ որ նրանց մշտական սովորութիւնն էր...

Այզպէս էին անցնում օրերս։ Ուսուցիչս շարունակում էր իրա պարապմունքը, թէն գործ գրած ջանքը ապարդիւն էր անցնում. իմացածիս վրայ մի առանձին բան չէր աւելանում։

Բայց մէկ անգամ քիչ մնաց, որ թողնէր ու հեռանար։

—Что такое подлежащее? հարցրեց նա դասի ժամանակ։

—Подлежащее? ըմ... подлежащее? արտասանեցի ևս մի քանի անգամ և շուարուած պատասխանեցի. «Подлежащее—это есть мысль, выраженная словами».

Ուսուցիչս նայեց երեսիս, ժպտաց, ապա գլուխը շարժեց։

—Ну, хорошо. А что такое предложение?

—Предложение? ըմ... это есть действие, посредствомъ котораго мы изъ двухъ данныхъ чиселъ.

—Достаточно, достаточно, ընդհատեց ինձ ուսուցիչս, նորից ծիծաղելով... Դուք չէք մտածում... Չեր գլխում քաօս է տիրում, նկատեց նա։

Ես լոեցի, ամօթից կարմրած, երբ յանկարծ զգացի, թէ ինչ պիտի պատասխանէի, բայց ինչ եմ պատասխանել։

Յաճախ էր զարմանում ուսուցիչս իմ տուած յիմար պատասխաններիս համար։ Նա գիտէր, որ ես բթամիտ չեմ և չէր իմանում ինչով բացատրել ցըրուած լինելու։

Նա ի՞նչ իմանար թէ գլխումս միայն և միմիայն ամուսնանալու հարցն էր պարտում զարմանալի արագութեամբ և մրրիկի պէս ցրում միւս բոլոր մըտքերս... Զգիտէր և այն, թէ ինքը որքան էր զիւր զալիս ինձ ամեն բանով, մանաւանդ խօսակցութեամբ և ձայնի մի առանձին տեմբըրով։

Երբ նա սկսում էր դասերս բացատրել, ես գաղտագողի հայեցքով նրան էի նայում, զիտում և մտածում. «Ո՞րքան երջանիկ կը զգայի ինձ, եթէ այս ըլքնադ երիտասարդը ձեռքս ինզրէր... Հարկաւ եթէ ես զրամօժիտ ունենայի, սա այսքան անտարբեր չէր լինի գէպի ինձ...»։

Հարկաւ ոչ մի յոյս ունենալ չէի կարող, որովհետեւ նրա՝ գէպի ինձ ունեցած անտարբերութիւնը համում էր ուղղակի վիրաւորանքի։

Նայում էի հայելուն, զմայլում ինքս ինձնով և զարմանում, թէ ինչպէս է, որ նա միանգամայն չի կախարդում հրապուրիչ զեղեցկութեամբս...»

Սաստիկ հետաքրքրում էի իմանալու, թէ արգեօք ի՞նչ կարծիք ունի ինձ վրայ։ Կասկածում էի, թէ մի գուցէ իմ մասին տարածուած աննպաստ կարծիքները հասել են նաև սրա ականջին, բայց և ինքս ինձ հանգստացնում և միիթարւում էի այն մտքով, թէ նա, իրեւ զարգացած երիտասարդ, երբէք ուրիշների կարծիքով չէր զեկավարուել ամուսնական հարցում, որ նա արդէն իր սեփական կարծիքը կ'ունենայ իմ մասին, քանի որ ամեն օր տեսնում է ինձ, ես էլ ամեն կերպ աշխատում էի պարկեշտ ու լիելօք

աղջկայ տպաւորութիւն թողնել նրա վրայ:

Զարմանալի հոգեկան դրութիւն էր պաշարել ինձ. որքան նա սառն էր վարւում, որքան անտարբեր վերաբերւում դէպի իմ արտաքինը, այնքան վասում, բորբոքում էր ինձ, այնքան աւելի ուժեղ էր տիրում մտքերիս և իշխում ինձ վրայ... Նրա կարծիքները ինձ համար անհերքիլի օրէնքի ոյժ էին ստացել և ես ցանկանում էի ամեն կերպ ենթարկուել նրան: Ինձ դիւր չէր գալիս միայն նրա՝ իմ դէմ պահպանած հպարտութիւնը. ես ինձ նրա առաջ մի տեսակ նսեմացած էի զգում և չէի իմանում ինչպէս փշրել նրան: Պահանջ էի զգում ամեն օր նրա հետ լինել, մի առանձին անհամբերութեամբ էի սպասում զասերի ժամերին, դըրսումը բոլորի մէջ նրան էի փնտուում. սաստիկ խանդուտում էի, եթէ նրան տեսնում էի ուրիշ կանանց հետ խօսելիս, մանաւանդ շատ էի նախանձում նրա... Ընկերներին, երբ տեսնում էի թէ ինչպէս նրանք պատմուենում, խօսում, թևակլցում էին նրա հետ... Բայց ինչո՞ւ էր նա միայն ինձ համար դարձել անմատչելի...

Երբէք ինքը չէր գալիս մօտս, չէր զօսնում ինձ հետ, մինչև ինքս չէի կանչում. «Պարոն Ռուբէն, մի բոպէով»: Բայց երբ գալիս էր, բաց չէի թողնում ամբողջ ժամերով, չնայած՝ որ յաճախ էր նայում ժամացոյցին, յօրանջում և գանգատում գլխի ցաւից ու անքնութիւնից...

Մեր հարևաններն արդէն սկսել էին փսփսալ իրանց մէջ և խեթ աչքով էին նայում մօրս, թէ ինչո՞ւ է թոյլ տալիս աղջկան ժամերով փակուել սենեակում մի օտար երիտասարդի հետ: Եւ տասս ու մայրս շատ անհանգիստ էին: Նրանք միանդամայն աւելորդ էին գտնում իմ պարապմունքս և շարունակ խօսում ու արտնջում էին, ասելով, որ Աստուածանից պատիժ

եմ ուղարկած իրանց համար: Մանաւանդ շատ էին վախում, որ վրաս բարձրացած այդ նոր փսփսոցի ձայնը կարող է Պողոսի ականջին հասնել և ամուսնանալուս հարցը ջուրը նետել: Մայրս ոչ մի կերպ չէր ցանկանում ձեռքից բաց թողնել նրա անբաւ հարստութիւնը:

Հօրաքոյրս էլ արդէն յոզնել էր ինձ խրատելուց ու մօրս մեղադրելուց. խսովել էր ու էլ մեր տուն չէր գտվու: Դժգոհ էր նաև հայրս: Բայց ես ոչ ոքի վրայ ուշագրութիւն չէի գարձնում, պարապմունքս շարունակում էի, աշխատելով լաւ պատրաստել զասերս և դիւր գալ ուսուցչիս, որ սաստիկ բարկանում էր, երբ վատ էի պատասխանում:

Սկզբում նա շատ թոյլ էր վերաբերում դէպի պարապմունքներս, որքան սովորում էի, այնքանով էլ բաւականանում էր, նոր դաս նշանակում, առանց կարգին բացատրելու, և հեռանում:

Բայց հետզետէ զարձաւ խստապահանջ, երբ դասերս պատրաստած չէի լինում, շատ էր նեղանում, այնպէս որ իմ պարապմունքներին՝ սպասածիս հակառակ ընթացք էր տուել: Բայց դարձեալ դժգոհ էր և շարունակ ասում էր, «Այդպիսի քայլերով ուր կը հասնէք»:

Նա կարծում էր, թէ ես իսկապէս մտադիր եմ պատրաստուել նախ զիմնազիս մտնելու և ապա բժշկական կուրսերի քննութիւն տալու: Ոչ մի տեղեկութիւն չունէր իմ տարիքի վերաբերմամբ, որովհետև դէմքս ինձ անհամեմատ փոքր էր ցոյց տալիս, քան թէ էի իրօք: Ոչ ոք 17—18 տարեկանից աւել չէր համարում ինձ: Եւ ես շարունակ այդ թիւն էի ասում, երբ քաղաքավարութեան էտիկէտները չիմացողներից Շէկն ու մէկը հարց էր տալիս, թէ քանի տարեկան եմ:

—Այնքան արիր, որ Պողոս էլ ձեռքներից դուրս

եկաւ, —մի օր խիստ ախրած ասաց մայրս, երբ տուն էի վերադաշտված զբոսանքից:

—Թքեմ ևս քո Պօղոսի վրայ... այդ էր պահաս, որ ես գնայի մի աչքանի ծեր Պօղոսին, որի համար այդպէս այրուելով ափսոսում ես, աղաղակեցի ես:

Նա չէր իմանում, որ ես արդէն ուսուցչիս գրաւել եմ, որ արդէն բացատրուել ենք և սպասում ենք պաշտօն ստանալուն, որ ամուսնանաք, բայց վճռել ենք մինչև այդ ոչ ոքի ոչինչ չասել:

Պարապմունքները մի կողմն էինք գրել արդէն և մեր ժամանակը անց էինք կացնում այնպէս, ինչպէս վայել է երկու իրար փոխադարձաբար սիրող երջանիկներին: Լուսնեակ գիշելները գրսից տուն չէինք գալիս Խօսում էինք, խօսում, անվերջ խօսում, բայց չէինք կշտանում: Շարունակ ծրագիրներ էինք կազմում մեր հեռու և մօտիկ ապագայի վերաբերեալ՝ թէ երբ ամուսնանաք, ինչպէս պէտք է ապրենք և ինչ պէտք է անենք: Մեր կազմած ծրագիրը շատ համեստ էր: «Երկու սենեակ կը վարձենք մի խոհանոցի հետ, ծրագրում էինք մենք, կը կահաւորենք շատ պարզ: Սենեակներից մէկը կը լինի ննջարան, միւսը՝ թէ սեղանատուն և թէ ընդունարան: Ի հարկէ խոյս կը տանք դնալ գալուց, որով և խոյս տուած կը լինինք աւելորդ ծախսերից: — Դու տնարարութեամբ կը պարապես, ես էլ իմ գործով, ասում էր նշանածու: «Ո՞րքան լաւ է երբ մարդ յոխած տուն վերադաշին գտնում է ամեն ինչ մաքուր, ամեն ինչ պատրաստ, ճրագը վառ, օջախը տաք», բացականչում էր նշանածու և կրծքին սեղմում ինձ, գուրգուրում, անվերջ գուրգուրում:

Խօսակցութիւնը մեղ հեռու տանելով, քցում էր ընտանեկան կեանքի մանրամասնութիւնների մէջ, թէ քանի երեխայ պէտք է ունենանք, ինչպէս պէտք է

կրթենք, ևայլն, ևայլն:

«Ա՞յս, Ե՞րբ ենք համնելու այդ երջանիկ օրինակացանչում էի ես՝ փարուելով նշանածիս կրծքին, և մեր շրթունքները միախառնուում էին...»

Մեր տանըցոց աչքի փուշն էի գարձել: Մայրս, տատս արդէն փիշացած աղջիկ էին համարում ինձ և սպասում ինքնասպանութեամբ վերջ տալ իրանց կեանքին, քանի որ այլևս չեն կարող լոյս աշխարհ դուրս գալ, մարդկանց երեսին նայել, որովհետև մեր ընտանիքի վրայ ամենքն են խօսում...»

Սակայն որքան եղաւ նրանց ուրախութեան չափը, երբ մի երեկոյ ես և նշանածու ուշ գիշերին զրօսանքից թեակցած տուն վերադառնալով յայտնեցինք մեր՝ վաղուց իրար սիրելու գաղտնիքը և շուտով ամուսնանալու մտադրութիւնը:

Մայրս, մանաւանդ տատս առաջի նուագ չէին ուզում հաւատալ, կարծելով թէ կատակ ենք անում, ուստի շատ վիրաւորուեցին: Բայց երբ նրանց համոզեցինք, նրանք անչափ ուրախացան, որովհետև արդէն յոյսները կտրել էին, թէ երբեկ կարող եմ ամուսնանալ, մանաւանդ մի աչքանի Պօղոսի փախչելուց յետոյ:

Եետոյ երկուսով նշանածիս մի շարք սովորական հարցեր տալուց յետոյ, թէ ում որդին է, ուրտեղացի է, ինչ պաշտօն ունի, ևայլն, ևայլն ու ամեն կերպ բաւական մնալով ստացած պատասխաններից, օրէնքցին մեզ և համբուրեցին մեր ճակատները:

Պակասն էլ հայրս լրացրեց, իր մի շարք խրատներով:

Մայրս թէ առած թոչում էր և մէկ-մէկ էլ կասկածելով հարց տալիս, թէ արդեօք չենք խարում իրան: «Դէ, թող ամօթից մեռնեն ձեղ վրայ բամբասողները, որ այնպէս հոգիները այրում էին, ով զիտէ ինչեր ե-

ըևակայելով», ասում էր մայրս։ Ուրախութեանս չափ չկար։ Գիտէի որ շատ պիտի նախանձէին ընկերուհիներս, երբ իմանային, թէ ում հետ եմ նշանուել, որովհներս իմանային շատերն ունէին ի նկատի։ Թէ հահտե Ռուբէնիս շատերն ի նկատի։ Իսկ բուստ չէր, բայց մեծ յարգանք էր վայելում։ Իսկ առայժմ մենք վճռել էինք ուշի-ուշով ծածուկ պահել մեր միմեանց խօսք տալու գաղանիքը։ Զգուշացրել էինք և մեր տանըցոց, որ նոյնիսկ մեր մօտ ազգականներից էլ ծածուկ պահեն մինչև ամուսնանալու օրը, ուրովհետեւ չնորհաւորութիւններ ընդունելու և աչքալուսանք եկողների համար ոչ յարմարութիւններ ունէինք և ոչ էլ ծախսելու աւելորդ գըտմ։ Շատ էին ուրախացել նաև քոյրերս, որ վերջապէս հերթը իրանց պիտի հանէր...

Անհամըերութիւնից գծւում էի ես։ Ռուբէները համարելով սպասում էի այս օրին, թէ երբ պէտք է թողնեմ հօրս աղքատ տնակը և սկսեմ ապրել իմ պաշտելի Ռուբէնիս հետ, որին սիրում էի հոգուս բոլոր ուժով և որի հետ այնպիսի անհուն, անսահման երջանակութիւն էի երազում։

Մի հանգամանք միայն ինձ քցել էր մտատանջութեան մէջ։ Ռուբէնս աւելորդ էր համարում հարսանիքիս հանդէսը մեծ շուքով կատարել։ Դրա համար փող էր հարկաւոր, որը ոչ ես՝ ունէի և ոչ էլ ինքը։ Նա շարունակ ինձ խրատում էր՝ աշխատելով իմ մէջ խորին արհամարհանք զարթեցնել դէպի բոլոր աւելորդ շքեղութիւնները։ «Մարդ պէտք է փայլէ իր ներքին արժանաւորութիւններով և ոչ թէ ցուցամոլութիւններով», յաճախ կրկնում էր նա։

Մենք միշտ միասին էինք լինում, միասին կարդում։ Դասերը թողել էինք, պարապում էինք լուրջ ընթերցանութեամբ, յետոյ խօսում, դատում։ Նա ինձ

բացատրում էր կարգացած գրքերիս իդէաները, թէ այս ինչ հեղինակութիւնը ինչ գրական արժէք ունի, ինչ պայմանների ծնունդ է և ինչ նշանակութիւն ունի կեանքի մէջ։

Պարապմունքներից յոգնելուց յետոյ, գնում էինք զրումնելու քաղաքից դուրս մեղ համար առանձնացած, ինքներս մեր մէջ կենդրոնացած։ Մէկ-մէկ էլ երեսում էինք հասարակական տեղերում։

Եյժմ աւելի հետաքրքրական էի դարձել և աւելի ուշադրութիւն էի գրաւում, որովհետեւ անհամեմատ լաւ էի հագնեւում։

Ռուբէնս էր հոգում այդ մասին։

Մայրս ինձ շարունակ յանդիմանում էր, թէ ինչու եմ Ռուբէնիս աւելորդ ծախսի մէջ քցում և ստիպում պարտք անել։ Բայց ավ էր ուշադրութիւն դարձնում նրա խօսքերին։ Ռուբէնիկս ինձ համար ոչինչ չէր խնայում։

Մենք արգէն մեղ համար բնակարան էինք վարձել և ամեն ինչ ապառիկ վերցնելով, կարգի էինք բերել։ Պատկաղրութեանս հանդէսի հանդերձն էլ էր արգէն պատրաստ։ Մնում էր միայն պսակի հրաման ստանալը։ Բայց ահա հէնց այդ միջոցին քաղաքային պուտով մի նամակ եմ ստանում հետեւեալ բովանդակութեամբ։

«Յարգելի օրիորդ։

Երէկ երեկոյթում բաղդ չունեցայ Զեղ հետ ծանօթանալու, որպէսզի կարողանայի անձամբ խօսել Զեղ հետ և միտքս յայտնել ուստի ստիպուած եմ այս նամակով դիմել Զեղ։ Պարզ և կարճ, բօմանթիքական գարձուածներով չեմ սկսում ասելիքս, այլ ուղղակի դիմում եմ բուն հարցին։ Ես ինդընում եմ Զեղ ձեռքը, որովհետեւ Դուք ինձ սաստիկ դիւր էք եկել։ Պատիւ

ունիմ յայտնելու, որ ես Գուրգէն Սեղբակեանն եմ:
Եթէ դուք էլ ինձ էք հաւանում, ինդրեմ յայտնէք:
Երեք օր ժանանակ եմ տալիս Ձեզ մտածելու:

Խորին յարգանքով սեղմում եմ Ձեր ձեռքը...

Գ. Սեղ.

Նամակը կարդում եմ և մնում զարմացած. չիմ
հաւատում աչքերիս. մէկ էլ եմ կարդում, նորից և
նորից սկսում... «Այս ի՞նչ հրաշք է, Աստուած իմ...
Միթէ էլի հրաշքների դարումն ենք ապրում, բացա-
կանչում եմ ես... Ձեռքս խնդրում է Գուրգէն Սեղբա-
կեանը, որի նմանները իմ ցնորդներից ու նոյնիսկ
նախանձից բարձր են եղել... Այս իրականութիւն է,
թէ մի տգեղ կատակ, ծաղր... Բայց ոչ, նամակը լուրջ
է գրած»... Մինչեւ կը սթափուէի՝ ինձ յանկարծ պա-
շարած զգացմունքից, մինչեւ կարգի կը բերէի անսպա-
սելի կերպով իրար խառնուած մտքերս, ներս մտաւ
նշանածս:

—Ինչ անտանելի բան է պաշտօնեաների հետ
գործ ունենալը. այսօր-վաղը քցելով, ձգձգում են մեր
պսակի հրամանը, սկսեց նա տրանջալ՝ նստելով մօտու:

«Վասպելու մի առանձին կարիք չկայ», յան-

կարծ դուքս թուաւ բերանիցս, որից խիստ շփոթուեցի:

—Ո՛չ, ոչ, պէտք է շուտ ստացուի, ամուսնանաք
վերջանայ, գնայ, —խօսակցութիւնս մէջ մտաւ մայրս,
որ սաստիկ վախենում էր, թէ չարախօս մարդիկ կա-
րող էին Ռուբէնիս ականջին՝ ով զիտէ ինչ փափալ և
քանը քանդել. Նա չգիտէր իմ ստացած նամակի մա-
սին:

—Այն, մայրիկ, ես էլ եմ վսակում... Բայց վռա-
գում էիր և դու, Անիւտա, այժմ ինչու կարիք չես
զգում, յանկարծ խօսքն ընդհատելով դարձաւ ինձ նը-
շանածս:

—Վոազում է, այն էլ ի՞նչպէս... ինձանից հար-
ցրու. Ամաչելուցն է այդպէս ասում: Դու քո բանը
տես, նորից սկսեց մայրս և շարունակեց, —առհասա-
րակ աղջկերքը ամաչկոտ են լինում, իսկ իմ կըթած,
մեծացրած աղջկը՝ առաւել ես:

Մայրս միշտ գովում էր ինձ Ռուբէնիս մօտ, ա-
սելով, թէ զլիսումն Շ վաստաբանի խելք կայ: Այդ օրը
երեկոյեան ընթրիքից յետոյ նշանածս ինձ առաջար-
կեց իջնել ներքեւ մեր տան առաջ գտնուող փոքրիկ պար-
տէզը: Մենք նստեցինք ծառերի տակ փատած նստարան-
ներից մէկի վրայ: Գեղեցիկ գիշեր էր. երկինքը պարզ,
եղանակը խաղաղ ու զով:

Նշանածս ձեռներս առած իրա ափերի մէջ, յաճախ-
րեանին էր սեղմում և խօսում, նկարագրում, ծրա-
գրում մեր հարսանիքի հանդէսը, թէ ումն ում պէտք
է հրաւիրենք, ինչպէս պէտք է հիւրասիրենք: Մի կող-
մից էլ պախարակում էր տիրող ծէսերը, որոնք աւե-
լորդ ծախսեր էին պահանջում, որ ինքը ոչ մի նշանա-
կութիւն չի տալիս եկեղեցական պսակին և եթէ հա-
սարակական հալածող կարծիքը չլինէր, կ'ապրէր ինձ
հետ առանց այդ յիմար ծիսակատարութիւնների, ևայն,
ևայն:

Նա շարունակում էր իրա խօսակցութիւնը, յաճախ-
անցնելով մի առարկայից միւսին... Ես լուռ էի և լսում
էի անուշաղիր: Միտքս Գուրգէնով էր զբաղուած. մտա-
ծում էի թէ ի՞նչ պատասխան պիտի տամ նրան:

—Անիւտա, ի՞նչ է պատահել ինչու ես լսել, չես
խօսում, վերջապէս խօսքն ընդհատելով, հարցրեց նշա-
նածս:

Ես պատասխանեցի, թէ չգիտեմ, աւելի լսելու,
քան խօսելու տրամադրութիւն է պաշարել ինձ:

—Այն, ես այդ նկատում եմ: Դու այօր ամեն ան-

գամուայ Անիւտան չես. չէնց եկածս ըսպէին էլ քեզ շփոթուած գտայ... չիւանդ չես հօ... Այս ասելով նա բռնեց գլուխս և նայեց աչքերիս լուսնի և լապտերի լուսում, յետոյ կամեցաւ կրծքին սեղմել ինձ, բայց զգալով իմ անտարերութիւնը, թողեց և մնաց կանգնած: Տիրեց մի ծանր լուսութիւն: Ես չէի իմանում ինչ ինչպէս վարուեմ, որովհետեւ չէի կարողանում վճիռ կայացնել և ըստ այնմ էլ գործել:

Մեր մէջ տիրած այդ անախորժ լուսութիւնը փառատեց տատս, որ մօտենալով մեզ, ձեռքի մրգով լիքը սկուտեղը դրաւ մեր առաջ: Դէպի Ռուբէնս ունեցած մէրն ու յարգանքը նա ուղում էր նրան շատ բան ու տացնելով արտայայտել և սաստիկ անհանգիստ էր զգում իրան, երբ մենք երկար ժամերով առանձնանում էինք:

—Ի՞նչ էք յօնքներդ կիտել, նկատեց նա կատակով:

—Անիւտի տրամադրութիւնը լաւ չէ, պատասխանեց նշանածս, ինձ նայելով...

—Երեի սաստիկ ուրախութիւնից, բացատրեց տատս... է՛հ, հէյ գիտի աշխարհ, ինչպէս հինը անցաւ, առաջ եկան նոր կարգեր..., Ո՞վ էր տեսել, որ նշանածներին թոյլ տային առանձնանալ մինչև պսակուելը: Իսկի թոյլ էլ չէին տալիս, որ գոնէ իրար երես տեսնենք: Ամուսինս Թաւրիդ է եղել, երբ ինձ պսակել են նրա հետ:

—Ի՞նչպէս, հարցրեց Ռուբէնս զարմացած:

—Նա իրա գլխարկը ուղարկել էր, ծնողներն էլ ինձ ուղել էին և այդ զլիարկի հետ պսակել տուել:

—Իսկ յետոյ դու ամուսնուդ կարողացած սիրել, հետաքրքրուեց նշանածս...

—Ես 11 տարեկան էի, տիկնիկ էի լսաղում, ի՞նչ էր իմանում թէ մէրը ինչ բան է:

—Իսկ յետոյ...

—Էլ ի՞նչ յետոյ, նրա երեսը ո՞վ էր տեսնում, որ սիրէր. Դ տարիներով օտարութեան մէջ էր լինում: Տուն էր գալիս միայն մի երկու շաբթով, ինչպէս օտար մարդ...

Այդպէս սկսեցին իրար հետ խօսել Ռուբէնս և տատս, իսկ ես չէի մասնակցում: Դրութիւնս անտանելի էր... Ես ինձ զգում էի երկու մազնիսի ազգեցութեան տակ: Մէկը՝ Ռուբէնսիս դէպի ինձ ունեցած անկեղծ և բորբոքուած սիրոյ զգացմունքը, որը ես էի զարթեցրել նրա մէջ գերմարդկային ոյժ գործ զնեւով, իսկ միւսը՝ չոր ու ցամաք առաջարկութիւնը... Առաջինը չունեսոր մի ուսուցիչ, երկրորդը յայտնի հարցուստներից մէկը... Սիրոյ և փառասիրութեան զգացմունքները ոյժով և մունքը սրտիս մէջ մարտնչում էին հաւասար ոյժով և մունքը չէին հաւասար ոյժով և հանես չէի իմանում նրանցից ո՞րը պէտք է յաղթող հանդիսանար և գուրս վանդէր միւսին:

Այս երկու այրող զգացմունքները դարձել էին մի շատ դժուարալոյն ինգիր և կաշկանդել ինձ:

—Որքան պարզ և անկեղծ կին է տատիկի, սկսեց Ռուբէնս նրա հեռանալուց յետոյ և համեմատութիւն մուրէնս նոր սերնդի կանանց մէջ, թուելով նըարաւ հին ու նոր սերնդի կանանց մէջ, թուելով նըարանց թէ առաւելութիւնները և թէ պակասութիւններանց թէ մուրէնիս վրայ անկեղծ մարդու տպաւորութիւնը: Մուրէնիս վրայ անկեղծ մարդու տպաւորութիւնը: Իսկ թողնում նաև մայրս: Նշանածս որքան էլ խօսում էր թողնում նաև մայրս: Նշանածս որքան էլ խօսում էր գէսից-դէնից, բայց և այնպէս նրան ոչ մի կերպ էր գէսից-դէնից, բայց և այնպէս նրան ոչ մի կերպ չէր յաջողուում վանել ինձ պաշարած լոելու յամաչէր յաջողուում վանել ինձ պաշարած լոելու յամա-

արամադրութիւնս:

Արգէն ուշ էր: Նա գնաց առանց իմանալու իմ տիրութեան պատճառը: Միւս օրը անցաւ նոյնպէս անտանելի: Մենք բաժանուեցանք անորոշ դրութեան մէջ:

Այդ միւերկու օրուայ ընթացքում ես դարձել էի չխօսկան։ Դէմքս մոայլ արտայայտութիւն էր ստացել, ժողիստ չքացել իսպառ... Շարունակ առանձնութիւն էի փնտում և մտածում, անվերջ մտածում...

Հէսց որ Ռուբէնս մօտենում էր, խնդրում էի մենակ թողնել ինձ, նա էլ ստիպուած էր լինում ինդիրս կատարել և հեռանում էր տխուր, մտամոլոր։ Նա էլ էր մուայլուել ինձ պէս և խիստ գունատուել։ Մէկ-մէկ մօտենում էր, նստում մօտս, հարցեր տալիս և սպասում պատասխանի... Իսկ ես զգում էի ինձ անել դրութեան մէջ. չէի իմանում ասելիքս հրտեղից սկսեմ... Ի՞նչպէս խզէի նրանից սիրտս, որին տուել էի հաղաք ու մի սիրոյ երգումներով, և յիշ տայի իրանը, որը ձեռք էի բերել արցունքների հեղեղով... բայց զրկուել Սեղրակեանի անբաւ հարստութիւնից, մերժելով նրա առաջարկութիւնը, նոյն չափ գժուար լուծելու խնդիր էր։

Երեակայութեանս մէջ պատկերացած էր երկու մէկը միւսին հակառակ տեսարաններ։ «Երկու սենեակներից բաղկացած մի անշուք, տղեղ բնակարան, կոպիտ, անճաշակ կահաւորած, ես էլ հասարակ կտորից անշնորհք հագնուած, գոգնոցս կապած, ձեռներս կոշտացած, դէմքս զալկացած, սենեակից խոհանոց, խոհանոցից սենեակ վազվղելիս, դըսի աշխարհից կտրուած, ամեն մի վայելչութիւններից, զուարձութիւններից զրկուած, շրջապատուած իմ երեխաններով, որոնցից մէկի կօշիկը ծակ, միւսի հագուստը պատուած, բոլորի դէմքին ես անբաւականութեան կնիքը դրոշմուած, իսկ շրթերին մշտական բողոք... Ամուսինս էլ ծանր հոգսերի տակ ձնշուած, վաղաժամ ծերացած... Մի խօսքով շուրջս ամեն ինչ պակաս, ամեն ինչ պաւատ...։ Այս բոլորին հակառակ պատկերանում էր Սեղրակեանի սեփական հոյակապ տունը իր շքեղ արդ ու զարդարանք-

ներով. սպասաւորներ, աղախիններ, գնալ-դալ, ճոխ ու վարժամ նիստ ու կաց, ձիարշաւ, կառքով շրջել, ներփական համերգներ, ճանապարհորդութիւն, մի կայացումներ, համերգներ, ճանապարհորդութիւն... Հիմա ես հրը խօսքով փառք, պատիւ, վայելչութիւն... Հիմա ես հրացնտրէի. տարակուսանքից խեղդւում էի... Ուղեղս հրաժարում էր ինձ օգնելու։

Վերջապէս վճռեցի մօրս յայտնել։ Նա սկզբում չէր կարողանում հաւատալ թէ կարող է այդպիսի փաստ գոյութիւն ունենալ, բայց երբ նամակը կարդացի, նա քիչ էր մնում՝ անսպասելի ու բախութեան յուզմունքից խելագարուէր։

— Սրան մերժի, էլ ի՞նչ ձգձգելու բան կայ. Իօ արքայութիւնը չպէտք է թողնես ու գնաս ընկնես պահպանը. սրա ստացած ուոճիկը նրա խոհարան է ստանում, սկսեց մայրս և այդ օրը ճաշի պատրաստութիւն չտեսաւ Ռուբէնսի համար, ինչպէս ամեն օր անում էր մի առանձին թափով։

Սակայն ես գեն տատանւում էի. Վերջնական վճիռ չէի կարողանում կայացնել։ Վրայ հասաւ երրորդ օրը, Ռուբէնս եկաւ սովորական ժամից էլ առաջ։

— Պատկի հրամանը վաղը կամ միւս օրը պատրաստ կը լինի, հալորդեց նա մի առանձին հղանակով, որով կը լինի, հալորդեց նա մի առանձին հղանակով, որով կարծես ինձ աւետիս էր տալիս՝ ուրախացնելու նպականի։

Նա մօտս նստեց, ձեռքս վերցրեց, ինչպէս անում էր միշտ։

— Ի՞նչպէս ես։ Տըամադրութիւնդ լաւացմաւ, հարցրեց նա, գլուխը դէպի ինձ թեքելով։

— Անիւտան այնպէս վատ է զգում իրան, որ խօսել չի ուզում, շտապեց պատասխանել մայրս իմ փոխարէն։ Պատկի հրամանը գեռ չստանաք։ Այսպիսի բրութեան մէջ ի՞նչպէս կարելի է պատկուել, աւելա-

ցրեց մայրս սառը եղանակով, առանց Ռուբէնիս նայելու:
Ես լուռ էի և գլխակոր, ինչպէս յանցաւոր և չէի
համարձակում նայել Ռուբէնի երեսին...

—Չեմ իմանում ի՞նչ պատահեց քեզ, երկու զի-
շեր է՝ չեմ քնում... Այս ի՞նչ լուռթիւն է, որ պաշարել
է քեզ, դիմեց նա ինձ յուզուած ձայնով:

—Իսկի ինձ հետ էլ չի խօսում, դա այդպէս բնա-
ւորութիւն ունի, շաբաթներով կը լոիր, Թող, մի՛ իօ-
սացնի, տեսնենք գլուխներս ի՞նչ է դավիս, նկատեց
մայրս և զուրս եկաւ:

—Սակայն ես շատ եմ զարմանում, թէ ի՞նչ կա-
րող էր պատահել քեզ... Դու այլ ես ի՞նքդ քեզ չես նմա-
նում... զգալի կերպով փոխուել ես, եթէ հիւանդ ես,
բժիշկ հրաւիրեմ: Եթէ ոչ, բացատրիր: Վարմունքի
ի՞նչի՞ նման է... Ես տանել չեմ կարողանում... Հան-
գիստ կորցրել եմ, սկսեց վերջապէս Ռուբէնս համ-
բերութիւնը կորցնելով:

Որքան նա խօսում էր, աղաչում, յանդիմանում,
նախատում, նորից աղաչում, այնքան խիզն ինձ ա-
ւելի էր տանջում, յօշոտում և կշտամբում... Լեզուս
ուղղակի կաշկանդուել էր բերանումս, շրթունքներս
կարծես իրար էին կպել ամուր, չէի կարողանում բե-
րանս բանալ, գոնէ մի խօսք արտասանել:

—Չէ որ մենք իրար ենք պատկանում ամբող-
ջապէս և պիտի կազմենք մի հոգի երկու մարմնի մէջ:
Դու չպիտի ոչի՞նչ ծածկես ինձնից, հրեշտակս. այսպէս
խօսելով, նա կամենում էր գրկել ինձ: Ես մի զգալի
շարժումով ցոյց տուի տհաճութիւնս: Նա մնաց ապ-
շած ինձ նայելիս:

—Արդեօք ի՞նչ է նշանակում այս բոլորը... Ի՞ն-
չու ես յամառում... Վերջապէս չպէտք է իմանամ, թէ
քո հոգու խորքում ի՞նչ է կատարում, արտասանեց

նա խիստ յանդիմանական եղանակով:

—Իրարանցում, մրմիջացի ես, հաղիւ լսելի ձայ-
նով:

—Իրարանցում, կրկնեց նա, թափանցող հայեց-
քը քցելով դէմքիս:

—Այդ ի՞նչ իրարանցում է, հարցը եց նա տարա-
կուսանքով:

—Զգիտեմ, հոգիս ու սիրոս ալեկոծում են փո-
թորկալի ծովի պէս, պատասխանեցի ես, մի քօման-
տիքական գարձուած մտարերելով իմ կարդացած գըր-
քերից:

—Ի՞նչպէս:

—Այն, այն, սիրոս դադարել է ինձ լսելոց, մը-
տարերիցի մի ուրիշը:

—Ես քեզ չեմ հասկանում:

Ի՞նչ ասէի. յանցանքիս ծանրութիւնը խոր զգա-
լով, մնացել էի շուարած:

—Ա՛, ուրեմն նախազգացմունքս ինձ չի խաբում,
տուաց նա և ընկաւ մտքի հտելից ու սկսեց անց ու
դարձ անել սենեակի մէջ:

Ես սկսեցի աչքիս տակով նրան դիտել:

—Ռուբէն, միթէ կը մնղաղը ինձ, եթէ զգաց-
մունքս ենթարկուած լինի փոփոխութեան, վերջապէս
խօսեցի ես, որ արդէն վճռել էի մերժել նրան:

—Այդ ի՞նչ ես ասում, բացականչեց նա ձեռներս
յափշտակելով... Նրա ձեռները դողում էին, իսկ աչ-
քերը լճացել էին. կարծես պատրաստում էր հեկեկալու:

—Թող ինձ, թող, Ռուբէն, ես արժանի չեմ քեզ,
թող ինձ յանցաւորիս, արտասանեցի ես տրագիկ
ձայնով:

—Ի՞նչիւ... մի ասաց, իմ պաշտելի, զու աւելի
քան արժանի ես և ի՞նչ յանցանքի վրայ է խօսք...

լու համար: Վճռել էին զիմել անօնիմ համակի օգնութեան: Ակսել էին յուղուել մինչև անդամ այն կանայք, որոնք նոյնիսկ աղջիկ չունեին: Հիմա արի ու համացիր, թէ ինչու համար... Բայց և այսպէս այս բոլորը չէր խանգարում ոչ մէկին, որ պատահելիս դիմաւորէին ինձ խորին յարգանքով և շնորհաւորէին հագար ու մի բարեմաղթութիւններ անելով: Ամենքը ևս կարծես մոռացել էին, որ ընդգամենը 4 օր առաջ երեկոյթում ինչպէս էին չնկատելու դնում բարես և նորիկայութիւնս, և թունաւորում ինձ իրանց կասկածելի հայեացքներով... իսկ այժմ իրանք էին վինտուում հայեացք՝ աշխատելով արժանանալ ուշալրութեանս: Շատեւը նոյնիսկ սպիտակ հագուստ էին պատուիրել հարսանիքիս գալու համար... Օ՛, կանայք, կանայք...

Ի՞նչպիսի սիրալիր ժպիտներ; ի՞նչ սրանց բարեմաղթութիւններ, ի՞նչ մեծարանք, ի՞նչ հրաւերներ:

Հոգիս հրճում էր բերկրանքից, միայն թեւէր էին պակասում ինձ, որ թոշէի... Բայց մի հանգամանք ինձ մնձ անհամապտութիւն էր պատճառում: Ես սաստիկ վախենում էի, որ իմ վերաբերեալ քաղաքում պարտող լուրերը համուէր փեսացուիս ականջին, քանի որ վճռել էին զիմել անսատորապիր նամակի օգնութեան:

Այդ լուրը սիանջիր համելուց յետոյ, ես մնացել էի շուաբուժական չէի իմանում ինչպէս նախապատրաստեմ փեսացուին՝ լսածներին չհաւատալու համար:

Բայց որքան եղաւ ուրախութեանս չափը, երբ մի օր ծիծաղելով ինձ պատմեց, որ իմ մասին՝ անօնիմ նամակ է ստացել, առանց կարդալու պատուի ու դէնէ շպրտել և բացաբեց, թէ անօնիմ նամակները զրէժ լուծելու ստոր միջոց է և անազնիւ մարդկանց գործ:

Իմ զիգեցկութիւնը օդապարիկի արագութեամբ էր ինձ բարձրացրել փեսացուիս աչքում: Նա այնքան

էր գրաւուել որ քարն էլ տրաքուէր, էլի ոչ ոքի չէր հաւատալ և իր հրճուանքը արտայայտելու համար խօսք չէր գտնում, միայն բացականչում էր. «Օ՛, իմ Սնիւչէր գտնում, որ ուրիշն ես»: Շուտով կատարուեց մեր հարտիկս, դու ուրիշն ես: Շուտով կատարուեց մեր հանգէսը և ես, վերջապէս, ողջ և առանիքի փառաւոր հանգէսը և ես, վերջապէս, ողջ և առաջ աղատուեցի մեր քաղաքացիների ձեռքից...»

Նոյն օրը կառք նստած դուրս եկաւ քաղաքից Ռուբէսս: Թէ մէր էր գնում, ևս չկարողացայ իմանալ:

Մեր կառքերը սրարշաւ իրար մօտով անցնելիս, վիրջի անգամը մեր հայեացքները իրար հանգիպեցին... Նրա դէմքը դալկացած էր, հայեացքը մոայլ: Միքանի շաբաթուայ մէջ կարծես ծերացել էր: Ես նկատեցի նրա զեղեցիկ աչքերի խորքից պարզ ցոլող յանդիմանութեան կրակը, իսկ շրթունքների վրայ անծայք և խորին հեգնանքը...

Եթէ տրամադրութիւն կը լինի լսելու, ևս միւս անգամ կը գառնամ ամուսնական կեանքիս խոստովանութեանը:





ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1. Ստ. Տէր-Աւետիքեան—«Զարաբաստիկ թուղթը», գինը 8 կոպ.
 2. Մովսէ Ղուկասեան—«Նահապետական տուն».
 3. Գործակատար Մարտիրոսը, Ա. Մ. Շահնազարիանց.
-

ԽՄԲԵԳԻՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

1. «Հանրային մատենադարան»-ի համար ընդունւում են ինքնուրոյն և թարգմանական գեղարուեստական գրուածքներ:
2. Իւրաքանչիւր գրուածք ցանկալի է, որ մօտաւորապէս 3 տպագրական թերթ (96 երես) լինի ամսագրի դիրքով:
3. Նիւթեր ուղարկողը պարտաւոր է յայտնել, թէ այդ նիւթերից ո՞րն է տպուած, ե՞րբ և ո՞ւր և ո՞րն է նրանցից անտիպ:
4. Թարգմանութիւնների հետ պէտք է ուղարկել նաև բնագիրները:
5. Խմբագրութիւնը իրաւունք է վերապահում իրան կարեւոր գէպքում սրբագրել ընդունուած նիւթի լիզուն:
6. Ուղարկուած նիւթերը պէտք է լինին մաքուր և պարզ գրուած, մի եւ առաջարկուած է ազգային գրադարան



NL0326116

3007

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ է

„ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ“

ամսագրի 1913 թուի բաժանորդագրութիւնը
(ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ)

Ամսագիրը լոյս է տեսնում Ընկերութեանս խմբագրական Մասնաժողովի խմբագրութեամբ և Ընկերութեանս հրատարակութեամբ:

Մատենադարանը կրպարունակէ քարգմանական եւ ինֆուրոյն գրուածքներ հետեւեալ ծրագրով.

1. Վէպեր, վէպիկներ, պատմուածքներ և գեղարուեստական ուրիշ գրուածքներ.—2. Թատերակ, զրուածքներ.—3. Երգիծաբանական երկեր.—4. Այլ և այլք.—5. Ցայտարարութիւններ:

Իւրաքանչիւր համար լինելու է ամբողջական գրուածք և բաղկացած մօտ 96 երեսից Ընկերութեանս հրատարակութիւնների ղիրքով:

Բաժնեգինն է:

Տարեկան	.	.	.	1 ռ. 80 կ.
Արտասհ. Տարեկան	.	.	.	5½ ֆլ.—

Բաժանորդ գրուել կարելի է՝ Թիֆլիզում՝ Ընկերութեանս գրասենեակում, Աբաս-Աբագ. հր. տուն կ. Հ. Բարեգ. Ընկ. և բոլոր հայ գրավաճառանոցներում: Գաւառներում՝ Ընկերութեանս տեղական ճիւղերի, աշխատակից-անդամների և տեղական գրավաճառների մօտ:

Պատասխանատու խմբ. Խոտիակ Ցարութիւնեան